




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Է Դ Գ Ա Ր Պ Օ

Ո Ս Կ Ի Բ Ջ Է Ջ

Ժ ո ղ ո վ ր ղ ա կ ա ն վ Է ալ.

Թարգմանեց

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԲՈՒԻԻԱՂԵԱՆ

ՍԵՐԵՔ
686

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մովսիսի Վարդանեան:

1887

2009

23 JUN 2005

82
-73

W

Է Դ Գ Ա Ր Գ Օ

Ո Ս Կ Է Բ Ջ Է Ջ

Վ Է Պ

Թ-բ-հ-ն-ն

ԳՐԻԳՈՐ ՇԱՀԲՈՒԴԱՂԵԱՆ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Մովսես Վարդանեանի:

1887

1991-6-58

210

Доз. Цензурою Тиф. 15 Апрѣля 1887 г.



3931/ 41 686-2009

Тшп. М. Варданянца, Тройц. пер., д. № 11.

№ 681



Ը Ն Ք Ե Ր Յ Ո Ղ Ի Ն.

«Էդգար Պո», «Ոսկե Բզեզ» վեպի հեղինակը ծնունդն առնալով Ամերիկայի Բալտիմոր քաղաքում 1813 թ. մեռաւ 7 Հոկտեմբերի (ն. տ.) 1849 թ. 37 տարեկան հասակում: Նորա հայրն ու մայրը դերասաններ էին: Մայրը երիտասարդ հասակում երեսէլի էր իւր գեղեցկութամբ, որ ժառանգեց որդին: Նա վաղ գրկուեցաւ ծնողներից եւ նորան որդեգրեց մի հարուստ վաճառական, որ վերջը եւրոպա տարաւ եւ յանձնեց նորան Լոնդոնի մօտ գտնուած մի գիշերօթիկ վարժարան: Վերադառնալով Ամերիկա, Էդգար Պո շարունակեց իւր ուսումը համալսարանում, ուր ցոյց տուեց իւր մեծ բնդունակութիւնը զանազան գիտութեանց մէջ, մանաւանդ մաթեմատիկայում: Այս ժամանակ Էդգար Պո-ն, նաստանի անկախութեան համար տեղի ունեցած պատերազմի ժամանակ՝ զնաց նա Յունաստան պատերազմելու: Բազմաթիւ արկածներից եւ ջքաւորութիւնից յետոյ, նա հանդես եկաւ գրական աւարեզ իբրեւ խմբագիր մի ամսագրի: Այս ժամանակ Էդգար Պո-ն, որ մօտ 20 տարեկան էր, ամուսնացաւ մի շատ գեղեցիկ եւ նշանաւոր օրիորդի հետ, որին սաստիկ սիրեց իւր ամբողջ կեանքում եւ որից սակայն վաղ գրկուեցաւ:

Էդգար Պոյի բնութիւնը, ինչպէս եւ մարդկութեան բազմաթիւ նշանաւոր ներկայացուցիչների, չէր տեղաւորվում այն շրջանակում, որ յատկացնում է մարդուն սովորական կենցաղավարական իմաստութիւնը, որի պատճառով անթիւ բամբաստաններն ու ամբաստանութիւններ բաժնւում էին նորա վրայ ամեն կողմից: Հանճարեղ երեսակալութիւն, բանաստեղծական աշխոյժ միտք, ոմի գեղեցկութիւն, երեսէլի պերճախօսութիւն, կրքոտ ու ազնիւ բնաւորութիւն եւ մի անսպասելի երեսակալութիւն՝ — անսորա եւ կազմում նշանաւոր եւ

վեհանձն մարդու ստեղծագործութեան գլխաւոր տարերքը: *)

Նորա մտքով շարունակ անցնում էին բազմազան, անսպասելի ստեղծագործութեան պատկերներ: Ընտանեկան կեանքում նա զարմանալի համեստ, քնքոյլ է. սիրող մարդ էր: Նորա զգածութեանը յաճախ ենթարկվում էր մեյամաղձային երեւոյթներին, մանաւանդ իւր սիրասուն կնոջ մահից յետոյ: Իբրեւ պատմիչ—նա աննման է: Նոյն իսկ պատմութեան սկզբից մինչեւ վերջը նա կաշկանդում է ձեր ուշադրութիւնը առանց բույացնելու, դուք առաւել ու առաւել գրաւվում էր նորանով:

1843 թ. յուս տեսաւ նորա ամենատարածուած ժողովրդական «Ոսկե Բզեզ» վեպը, որի համար մրցանակաբաշխի ժամանակ 100 դոլլար պարգէւ ստացաւ: Ահա այդ վեպն է, որ այժմ առաջարկում ենք ընթերցողներին:

Մենք ընտրեցինք «Ոսկե բզեզ» վեպը իբրեւ առաւել գրաւող գործ իւր հանգամանքների խորհրդաւոր զուգադրութեամբ, իբրեւ վերին աստիճանի սրամիտ եւ զարգացուցիչ նիւթ.—ջը նայելով սորա մի քանի աննշան անյարմարութեանց ընթերցողների համար, օրինակ—գործածուած օտարազգի այբուբենը:

*) Նա գրեց բազմաթիւ քննական և փիլիսոփայական յօդուածներ, ճանապարհորդելով Ամերիքայի քաղաքներում կարգում էր նա հրապարակական դասախօսութիւններ, որոնցից առաջինն էր Նորա «Էվրիկան»: Նորան ամենուրեք սիրալիր ընդունելութիւն էին ցոյց տալիս:

ՈՍԿԵ ԲԶԷԶ

Ա.

Է՛ճէ, այս ի՞նչ է. այս երիտասարդի ոտները խորովվում են. նորան խալթել է քաղիժը:

Արդէն մի քանի տարի է, որ մօտ ծանօթ եմ Վիլիամ Լեգրանի հետ: Նա բողբջական հին ընտանեաց զաւակ էր եւ մի ժամանակ շատ հարուստ. բայց ձախորդութիւնների մի ամբողջ շարք նորան կատարեալ աղքատութեան հասցրին: Նորա դրութիւնը աննախանձելի էր, երբեմն մինչեւ անգամ ցաւալի, եւ ի վերջոյ նա վճռեց թողնել Նոր—Օրլէանը, իւր նախնեաց քաղաքը եւ գաղթել Սիւլիվան կղզին, Չարլստօունի մօտ, Հարաւային Կարօլինայում:

Այս կղզին ամենատարօրինակ կղզիներից մէկն է. նա բաղկացած է միմիայն ծովի աւազից եւ մօտ երեք մղոն երկայնութիւն ունի, իսկ լայնութիւնը ոչ մի տեղ քառորդ մղոնից չէ անցնում: Նա բաժանուած է մայր ցամաքից մի աննշան նեղուցով, որի ցուրը ծծվում է եղէգների ու տղմի մէջ, որոնք ջրային հաւերի ամենասիրելի ընակատեղին են: Կղզու բուսականութիւնը, ինչպէս արդէն կարելի է ենթադրել, աղքատ է, կամ աւելի լաւ ասել—գաճաճ. փոքր ի շատէ նշանաւոր մեծութեան ծառեր նորա վրայ չեն գտնիլ: Արեւմտեան ծայրի մօտ, ուր բարձրանում է Մուլտրի մարտկոցը, եւ մի քանի փայտեայ հասարակ շինութիւններ, որոնք ամառը մարդաբնակ են դառնում Չարլստօունի տենդից ու թո-

զից փախչող մարդկանցից. յիրաւի պատահում են տեղ տեղ ոչ շատ մեծ արմատները, միայն ի բաց առնելով նոյն իսկ այս մասը եւ ծովի եզերքում ձգուող միակերպ տխուր սպիտակ տարածութիւնը,—ամբողջ կղզին ծածկուած է խիտ հոտաւտ մրտենու թփերով, որոնց այնքան յարգում են անգլիական պարտիզպանները: Այստեղ մրտենիները լինում են երկու սափէն բարձրութեամբ, աճում են շատ խիտ եւ լցնում օդը անուշահոտ բուրմունքով:

Այս անտառի խորքում, կղզու արեւելեան, այսինքն աւելի հեռացած ծայրից ոչ հեռու, Լէգրանը իւր ձեռքով շինեց իւր համար խրճիթ, ուր եւ կենում էր նա այն ժամանակ, երբ ես առաջին անգամ բոլորովին պատահմամբ ծանօթացայ նորա հետ: Մեր ծանօթութիւնը շուտով բարեկամութեան փոխուեցաւ. այս միայնակեացը իմ մէջ հետաքրքրութիւն եւ յարգանք զարթեցրեց: Նա լաւ կրթութիւն էր ստացել. մանաւանդ որ ի բնէ լաւ ընդունակութեամբ էր օժտուած. բայց նորանում սաստիկ զօրեղ էր ատելութիւնը դէպի մարդիկ. նորա հոգւոյ տրամադրութիւնը փոփոխակի կամ զուարթ էր լինում, կամ վշտալի: Նա ունէր շատ ընտիր գրքեր, բայց հազիւ էր կարդում նոցա: Նորա գլխաւոր բաւականութիւնն էր որսը եւ ձկնորսութիւնը, կամ թէ զբօսանքները ծովի ափին, ուր նա որոնում էր խխունջներ եւ ժողովում միջատներ: Նորա ժողովածունքին կարող էլ նախանձել ամենանշանաւոր գիտնականն անգամ: Նորա ն սովորաբայ ուղեկցում էր ծեր նեգրը, Իւպիտէր անունով. նա ազատութիւն էր ստացած մինչեւ Լէգրանի ընտանեաց ձախորդութիւնը, եւ ոչ մի սպառնալիք ու խոստումն չէին կարող ստիպել նորան հեռանալ Լէգրանից: Նա իւր պարտականութիւնն էր համարում հետեւելու երիտասարդ պարոնին, կամ ինչպէս ինքն էր ասում, մասսա Վիլիսն ամեն տեղ: Շատ կարելի է որ Լէգրանի ազգականները, որոնք նորան փոքր ինչ խելագար

էին համարում, հաւանութիւն էին տալիս ծեր նեգրի յամառութեան, փախստականին պահապանի ու վերակացուի հսկողութեանը յանձնելու նպատակով: Միւլիւան կղզին ընկած է լայնութեան այնպիսի աստիճանների տակ, ուր ձմեռները հազիւ են խիտ լինում, իսկ եթէ տարուայ վերջը երբեմն կրակ են վառում, այդ արդէն բացառութիւն է: Սակայն 18... թ. հոկտեմբերի կիսին օրը սաստիկ ցուրտ էր: Արեւի մայր մտնելուց առաջ ես քայլերս ուղղեցի դէպի բարեկամիս խրճիթը, որի հետ արդէն մի քանի շաբաթ էր, չէի տեսնուել: Ես այն ժամանակ բնակւում էի Չարլստօունում, կըղզուց մօտ ինը մղոն հեռաւորութեամբ, իսկ հաղորդակցութեան միջոցները այն ժամանակ այնքան յարմար չէին, ինչպէս այժմ: Վօտենալով խրճիթին, ես իմ սովորութեանս համաձայն բաղխեցի դուռը, բայց պատասխան չրկար. ես գիտէի, թէ որտեղ էր պահուած բանալին, առայ այն, բաց արի դուռը եւ ներս մտայ: Կրակը զուարթ բորբոքւում էր վառարանում, որ ի հարկէ, շատ գուրալի էր: Ես հանեցի վերարկուս, աւելի մօտ քաշեցի բաղկաթուր ճաքձքող փայտերին եւ սկսեցի սպասել տանտէրերի գալուն:

Գիշերը վրայ հասաւ թէ չէ, նոքա վերադարձան եւ սիրով ընդունեցին ինձ: Իւպիտերը ուրախ ժպտալով, սկսեց ընթերիքի համար պատրաստել մի քանի ջրային հաւեր: Լէգրանը ցնծութեան ծայրն էր հասել,—այլապէս ինչպէս անուանէր նորա գրգռուած գրութիւնը: Նա գտել էր մի ինչ որ անյայտ, կատարեալ նոր տեսակի երկփեղկանի խխունջ, իսկ որ ամենագլխաւորն է, նա աշխատել էր Իւպիտէրի օգնութեամբ բռնել մի բզէզ, որ, ինչպէս նա կարծում էր, դեռ բոլորովին անյայտ էր գիտութեանը: Այս բզէզի վերաբերութեամբ նա ցանկանում էր իմ կարծիքն իմանալ վաղը առաւօտ:

—Իսկ ինչու ոչ այսօր, հարցրի ես, շփելով ձեռքերս կրակի առաջ, մտքումս անիծելով բզէզների բոլոր ցեղը:

—Այո, եթէ ես միայն կարողանայի ենթադրել թէ դուք այստեղ էք, ասաց Լէգրանը, բայց ես վաղուց է չեմ տեսել ձեզ: Ուրեմն ինչպէս կարող էի գուշակել, թէ դուք ինձ կայցելէք հէնց այս գիշերը: Տուն վերադառնալիս, ես հանդիպեցի մարտկոցի գլխաւոր լէյտնան Գ...ին եւ յիմարութիւն արի, տուի նորան բզէզը, այնպէս որ առաւօտուանից վաղ դուք չէք կարող նորան տեսնել: Մնացէք ինձ մօտ գիշերս, իսկ վաղը արշալոյսին կուղարկեմ Իւպիտէրին բզէզը բերելու: Եթէ տեսնէք, շատ կը հիանաք: Դա բնութեան ամենահրաշալի արարածն է:

—Ի՞նչը, արշալոյսը:—

—Ո՛չ, ո՛չ, ի՞նչ արշալոյս, —բզէզը:—

—Նա փայլուն ոսկու գոյն ունի, լաւ մեծ ընկոյզի մեծութեամբ: Մէջքի մի ծայրին նա երկու այնհոլորէ բծեր ունի, եւ երրորդը երկայնաձեւ. միւս ծայրին բեղիկներ...:

—Նա ամենեւին բեղիկներ չունի, մասսա Վիլլ: Գրազ կը գամ, ընդհատեց նորան Իւպիտէրը, որ այդ ոսկի բզէզը մէկ ծայրից մինչեւ միւսը զուտ ոսկուցն է. դուքն ու ներսը, բացի թեւերը: Ծնուելու օրիցս մինչեւ այսօրս չեմ տեսել դորա կիսի չափ ծանր բզէզ:

—Լաւ, ասեմք թէ դու ճշմարիտ ես ասում, Իւպիտէր. պատասխանեց Լէգրանը այնքան աշխոյժ, որ ինձ թուաց, թէ այդ ամենեւին չէր համապատասխանում հանգամանքներին, —բայց գեռ այդ քեզ իրաւունք չի տալիս հաւերը բոլորովին այրելու:—Միջատի գոյնը, (եւ նա դարձաւ ինձ) այնպէս է, որ Իւպիտէրի ենթադրութիւնը կարող է հաւանական երեւալ: Դուք երբէք չէք տեսել այդպիսի մետաղական փայլ, ինչպէս որ նորա թեւերի գոյնն է, բայց դուք չէք կարող դատել այդ մասին մինչեւ վաղը առաւօտ, իսկ առ այժմ ես կը փորձեմ նկարելու նորա ձեւը:

Եւ նա նստեց փոքրիկ սեղանի մօտ, ուր կար գրիչ ու

թանաք, բայց թուղթ չը կար. նա որոնեց թուղթը արկղի մէջ, բայց այնտեղ էլ չը գտաւ:

—Նա աւարտեց չէ, ասաց նա. վերջապէս, այս էլ բաւական է: Այս ատելով, նա հանեց իւր բաճկոնակի գրպանից մի ինչ որ հին, շատ ցեխոտ թղթի կտոր, եւ նորա ծայրին գրչով նկարեց բզէզի ձեւը: Այս բոլոր ժամանակը ես նստած էի կրակի մօտ, որովհետեւ դեռ լաւ չէի տաքացել: Լէգրանը տեղից չը վերկենալով տուեց ինձ նկարը: Նոր էի նկարը ձեռքս առել, որ լսելի եղաւ սաստիկ հարց եւ դռան ջանկրտելը: Իւպիտէրը բաց արաւ դուռը, եւ Լէգրանի ահագին ջրասոյզ շունը ներս պրծաւ սենեակը, ընկաւ ուսերիս վրայ եւ սկսեց փայփայել ինձ: Ես յաճախ փայփայում էի նորան իմ առաջուկայ այցելութեանցս ժամանակ: Երբ նա վերձայէս հանդարտուեցաւ, ես նայեցի թղթին, եւ ճշմարիտն ասած, փոքր ինչ գրաւուեցայ բարեկամիս նկարով:

—Այո, ասացի ես, զննելով նկարը. տարօրինակ բզէզ է, խոստովանում եմ, որ այս նոր տեսակի է. իմ կեանքումս սորա նմանը չեմ տեսել: Ամենից աւելի սա յիշեցնում է ինձ գանգ կամ մեռածի գլուխ:

—Մեռած գլուխ. —կրկնեց Լէգրանը:— Այո, թղթի վերայ նա յիրաւի փոքր ինչ նման է նորան. վերին երկու սեւ բծերը ներկայացնում են աչքերը, իսկ ներքեւի երկայնաձիգ ձեւը բերանը. այնպէս չէ: Բացի դորանից, ամբողջ մարմինը ձուածեւ է:

—Նկարելի է, այդպէս է, պատասխանեցի ես, բայց ես տարակուսում եմ, Լէգրան, ձեր նկարի իսկութեան վրայ, այնպէս որ առաւել լաւ կանեմ, եթէ միջատի մասին կարծիքս չը յայտնեմ, մինչեւ որ նորան աչքովս չը տեսնեմ:

—Լաւ: Բայց ես չը գիտեմ, թէ ինչո՞ւ այդ այդպէս պէտք է լինէր, ասաց Լէգրանը փոքր ինչ վշտացած: Ես նկարում եմ բաւական լաւ, որովհետեւ ես լաւ ուսուցիչներ եմ

ունեցած, եւ ուրեմն այդ արուեստը նոր չեմ սովորում:

—Բայց եթէ այդպէս է, դուք հանաք էք անում, սիրելի բարեկամ: Դուք բաւականին լաւ նկարել էք այս գանգը, եւ մինչեւ անգամ կարող եմ ասել, բոլորովին նման է, որքան ես տեղեակ եմ մարդակազմութեանը, եւ ձեր բզէզը շատ տարօրինակ կը լինէր, եթէ նա նման է ձեր նկարին: Նս կարծում եմ, որ դուք կանուանէք նորան մարդագլուխ բզէզ (scarabeus caput hominis) կամ մի ուրիշ սորա նման անուն կը տաք: Բնական գիտութեան մէջ շատ այդ տեսակ անուններ կան: Բայց ո՛ր են նորա բեղիկները, որոց մասին դուք ասում էիք:

—Բեղիկները, — կրկնեց Լէգրանը, տաքանալով առանց մի յայտնի պատճառի. կարծեմ, դուք կարող էք նոցա տեսնել. ես նոցա նկարեցի այնպէս, ինչպէս իսկականն է եւ կարծեմ որ այս շատ բաւական է:

—Նստ բարի: Ասենք թէ դուք նոցա նկարել էք, բայց եւ այնպէս, այն էլ ճշմարիտ է, որ ես նոցա չեմ տեսնում: Եւ ես տուի նորան թուղթը, առանց մի խօսք աւելացնելու, որպէս զի առաւել եւս չը գրգռեմ նորան: Նս շատ զարմացայ երբ տեսայ, թէ գործը ինչպիսի ընթացք ստացաւ. նորա վատ տրամադրութիւնը զարմացրեց ինձ: Նորա նկարի վրայ ամենեւին չէին երեւում բեղիկներ եւ առ հասարակ նա շատ ուման էր սովորական մեռած գլխի նկարին:

Նա վշտացած վերցրեց թուղթը եւ անկասկած կամեաւ եր ձիւտել եւ իսկոյն կրակը ձգել, բայց այս միջոցին նորա հայեացքը պատահմամբ ընկաւ նկարի վրայ եւ բոլոր նորա ուշք ու միտքը կարծես թէ իսկոյն կաշկանդուեցաւ: Մի ակնթարթում նորա դէմքը կարմրեց, ապա սաստիկ գունատուեցաւ: Մի քանի րոպէ շարունակ անշարժ խորին ուշագրութեամբ զննում էր նկարը. վերջապէս նա վեր կացաւ, վերցրեց սեղանից մոմը եւ նստեց սենեակի միւս ծայրում:

Դրուած մեղուկի վրայ: Այնտեղ նա շարունակում էր հետաքրքրութեամբ զննել թուղթը, զանազան կողմը շուռումուռ տալով: Այս բոլոր ժամանակը նա ոչինչ չէր խօսում. նորա վարմունքը չափազանց զարմանք զարթեցրեց իմ մէջ, բայց ես յարմար դատեցի չը գրգռել նորան հարց ու փորձով եւ չը զօրացնել նորա հոգւոյ վատ տրամադրութիւնը: Ի վերջոյ նա վերցրեց թղթակալը, դրեց նորա մէջ թուղթը, պահեց արկղիկի մէջ եւ ամուր փակեց: Այժմ նա աւելի հանդարտուեցաւ եւ նորա առաջուան յուզմունքն անհետացաւ: Նա շատ խորասուզուած էր մտածմունքների մէջ: Գիշերով հետ զհետէ նա մոտատնջութեանց մէջ էր ընկնում եւ իմ կատակներիցս ոչ մէկը նորան չէին հետաքրքրում: Սկզբում ես կամեում էի նորա մօտ գիշերել, որ շատ անգամ պատահում էր, բայց տեսնելով տանտիրոջ տրամադրութիւնը, ես խոհեմութիւն համարեցի մնալ բարեւ ասել նորան: Նա ինձ չէր խնդրում մնալ, բայց ճանապարհ ձգելով ինձ, նա աւելի եռանդով սեղմեց ձեռքս, քան ուրիշ անգամները:

Այս անց քիչ մի ամիս անցած, — մինչ այդ ժամանակ ես ոչինչ չէի լսել Լեգրանի մասին, — ինձ այցելեց Չարլստօնում նորա ծառայ Իւպիտերը: Երբէք խեղճ նեղրին ես այդպէս տխուր չէի տեսել, եւ վախեցայ, չը լինի թէ բարեկամիս որեւէ գոթադրութիւն լինի պատահած:

—Ի՛՛հ, ի՛նչ նոր բան կայ, Իւպիտէր: Ի՞նչպէս է քո պարոնի քէֆը:

—Ի՛հ, ճշմարիտն ասած, պարոն, նորա քէֆն այնքան լաւ չէ, ինչպէս հարկն էր:

—Քէֆը վատ է: Այդ ինձ շատ եւ շատ վշտացնում է, բայց նա ի՛նչիցն է գանգատւում:

—Ահա հարցը դրանումն է: Նա երբէք ոչինչ բանից չի գանգատւում, բայց եւ այնպէս նա սաստիկ հիւանդ է:

—Սաստիկ հիւանդ է, Իւպիտէր: Ապա ի՛նչու դու իս-

կոյն չասացիր ինձ: Ի՞նչ է, նա անկողնումն է պառկած:

— Ո՛չ, ո՛չ, նա անկողնում չէ: Նա ո՛չ մի տեղ հանգստութիւն չի գտնում: Ահա ինչն է ինձ վշտացնում: Ահա թէ ինչո՞վ է ինձ սաստիկ անհանգստացնում մասսա Վիլլը:

— Ես ուզում եմ մի փոքր լաւ հասկանալքո պատմածը: Դու ասում ես, որ քո պարոնը հիւանդ է: Արդեօք նա քեզ չի ասել, թէ ինչով է նա տանջւում:

— Օ՛հ, պարոն, անօգուտ է խելքին զօռ տալը: Մասսա Վիլլն ասում է որ ոչինչ չը կայ, բայց ես չեմ հաւատում: Եթէ այդպէս էր, ապա նա ինչո՞ւ ման է գալիս մտատանջ, աչքերը խոնարհած, վիզը ձկած, ուտերը վեր ու վեր քաշելով եւ այնպէս գոռնատ է: Եւ ի՞նչու նա միշտ թուանշաններ ու թուանշաններ է գրում:

— Նա ի՞նչ է անում, Իւպիտէր:

— Նա թուեր է գրում նշաններով քարեստիստակի վրայ, ամենահրաշալի նշաններ, որ օրումն չեմ տեսել: Ես էլ սկսում եմ տարակուսիլ: Պէտք է որ աչքս միշտ նորան նայէր եւ վրայից չը հեռացնեմ: Մի անգամ նա դուրս պըրծաւ ինձնից լոյսը չը ծագած, եւ ողջ Աստծու օրը կորած էր: Ես լաւ դադանակ էի պատրաստել, որ նորան մի լաւ խրատեմ, ինչպէս հարկն էր, երբ կը վերադառնար, բայց ի՞նչ արած. ես այնպէս յիմար եմ, որ մեղքս եկաւ, այնպէս վշտացած վերադարձաւ խեղճը տուն:

— Ճշմարիտ է, Իւպիտէր, դու շատ լաւ ես արել, որ այդքան բարութեամբ ես վարուել խեղճի հետ: Նորան չի հարկաւոր ծեծել, Իւպիտէր: Նա, շատ կարելի է, այդ չի տանիլ: Բայց, քո կարծիքով, ի՞նչից պատահեց նորան այդ հիւանդութիւնը, կամ աւելի լաւ ասել, նորա վարքի փոփոխութիւնը: Արդեօք մի անախորժ դէպք չի պատահել նորան այն ժամանակից, երբ ես ձեզ մօտ էի:

— Ո՛չ, պարոն, նորանից յետոյ, ինչ դուք մեզ մօտ էիք,

անախորժ դէպք չի պատահել, բայց նորանից առաջ այո՛. ես կասկածում եմ, որ այդ հէնց այն օրը պատահեցաւ, երբ դուք մեզ մօտ էիք:

— Ի՞նչպէս, ինչ ես ուզում ասել:

— Է՛հ, պարոն, ես կուզեմ ասել բզէզի մասին, այ թէ ի՞նչ:

— Ի՞նչի՞ մասին:

— Բզէզի մասին... Ես հաւատացած եմ, որ այդ ոսկի բզէզը խայթել էր մասսա Վիլլի գլուխը:

— Բայց ինչո՞ւ ես դու այդպէս կարծում, Իւպիտէր:

— Որովհետեւ նա լաւ խայթիչներ ունի դորա համար: Ես երբէք չէի տեսել այնպիսի կատաղած բզէզ. նա բռնում է եւ խայթում ամենը, ինչ որ ճանկում է: Մասսա Վիլլը քիչ էր մնում որ բռնել էր, բայց իսկոյն ձեռքից թողեց: Ես ձեզ հաւատացնում եմ այդ ապացոյց է, որ բզէզը նորան խայթեց: Բզէզի տեսքը ու նորա բերանը ինձ շատ դուրալի են, — այդ ճշմարիտ է. բայց ես չէի ուզում վերցնել նորան մասնետով: Ես վերցրի թուղթ, բռնեցի նորան այդ թղթով եւ նորա բերանը կոխեցի փոքրիկ թղթի կտոր, փաթաթեցի նորան եւ այնպէս բռնեցի:

— Ուրեմն դու կարծում ես, որ բզէզը յիշաւի խայթեց քո պարոնին եւ որ նա դորանից հիւանդացաւ:

— Ի՞նչ չարկաւոր է կարծել, ես բոլորովին ոչինչ չեմ կարծում, ես առանց այդ էլ գիտեմ: Իսկ թէ ինչո՞ւ համար նա միշտ ոսկու մասին է մտածում, — նշանակում է, նորան խայթել է ոսկի բզէզը: Ես բաւականին բան եմ լսել այդ ոսկի բզէզների մասին:

— Բայց դու ի՞նչ գիտես, թէ նա ոսկու մասին է մտածում:

— Ես ի՞նչ գիտեմ: Ես այնպէս գիտեմ, որ նա մինչեւ անգամ երազումն էլ նորա մասին է մտածում, — ահա թէ ինչպէս գիտեմ:

— Ճշմարիտ է, Իւպիտէր, շատ կարելի է, դու իրաւացի ես, բայց ասա խնդրեմ, ի՞նչ բաղտաւոր հանգամանքին եմ պարտական քո այսօրուայ այցելութեանդ:

— Դորանով ի՞նչ էք ուզում ասել, պարոն:

— Դու արդեօք որ եւ է ծրար խօսքս բերել ինձ համար Լէգրանից:

— Ո՛չ, պարոն, ես ձեզ միայն այս նամակն եմ բերել:

Եւ Իւպիտէրը տուեց ինձ թուղթը, որի մէջ ես կարդացի հետեւեալը. —

«Սիրելի բարեկամ:

Ինչո՞ւ այսքան երկար ժամանակ ձեզ չեմ տեսել: Լիայոյս եմ, որ դուք այնքան մանկամիտ չէք լինիլ, որ վշտանալիք իմ մի փոքր յանդգնութեանս համար, բայց ո՛չ, այդ շատ անհաւատարի է,

Այն օրուանից, երբ մենք տեսնուեցանք, մի ի՞նչ որ նշանաւոր բան ինձ սաստիկ անհանգստացնում է: Այդ մի որ եւ է բանը ես կամենում եմ հաղորդել ձեզ. բայց ես տարակուսում եմ, թէ ի՞նչպէս ասեմ ձեզ, մինչեւ անգամ չը գիտեմ էլ, թէ կարո՞ղ եմ ասել արդեօք:

Մի քանի օր է, որ ես ինձ բոլորովին լաւ չեմ զգում: Եւ խեղճ ծերունի Իւպիտէրը ձանձրացրել է ինձ իւր անդուհանգիստութեամբ եւ խնամքով: Կը հաւատանք, եթէ ասեմ. մի անգամ նա պատրաստել էր մի հատտ մահակ, որ խրատէր ինձ այն պատճառով, որ ես առանց նորան հարցնելու տանից դուրս էի գնացել եւ օրս անցկացրել միայնակ բլուրների վրայ: Ես հաւատացած եմ, որ միայն իմ տխուր տեսքս ազատեց ինձ նորա հարուածներից: Ես ոչինչ չեմ աւելացրել իմ ժողովածուիս մեր տեսութիւնից յետոյ:

Եկէք Իւպիտէրի հետ, եթէ այդ ձեզ նեղութիւն չի պատճառիլ: Ե կ է.ք, ե կ է.ք: Ես ցանկանում եմ ձեզ տեսնել այս երեկոյ մի շատ կարեւոր գործի համար: Հաւատացնում

եմ ձեզ, որ այդ գործը շատ ծանրակշիռ եւ կարեւոր է:

Զեր անձնուէր

Վիլիամ Լէգրան»:

Այս նամակի ձեւը իմ մէջ սաստիկ անհանգստութիւն յառաջացրեց: Ոճը բոլորովին տարբերւում էր Լէգրանի սովորական ոճից: Ել ի՞նչ նոր բան է գլուխն ընկել: Ելի ի՞նչ նոր ցնորք է տիրել նորա առանց այդ էլ տաք գլխին: Ի՞նչ մի «ճ ա ն ր ա կ շ ի ու կ ա ր եւ ո Ր գ ո Ր ծ» կարող էր ունենալ նա: Իւպիտէրի հաղորդածը ոչինչ բարի բան չէր խոստանում: Ես երկնչում էի, որ դժբաղտութեան մշտական լուծը վերջ ի վերջոյ խանգարած չը լինէր բարեկամիս ուղեղը: Առանց մի բոպէ կորցնելու, ես պատրաստուեցայ ուղեւորուիլ նեգրի հետ ծովեղրը. երբ մենք տեղ հասանք, ես տեսայ մանգաղ եւ երեք քլունգ. նոքա դրուած էին մեզ համար պատրաստուած նաւակի յատակում:

— Այս ամենը ի՞նչ է նշանակում, Իւպիտէր, հարցրի ես:

— Այո: Այս մանգաղ է, պարոն, եւ քլունգներ:

— Ես լաւ տեսնում եմ թէ ի՞նչ են. բայց սոքա ինչո՞ւ համար են այստեղ:

— Մասսա Վիլը պատուիրեց ինձ գնել քաղաքում իւր համար այս մանգաղը եւ այս քլունգները. ես նոցա շատ թանգ վճարեցի, — այս պատրաստութիւնները մեզ ահագին փող արժեն:

— Բայց, ի սէրն Աստուծոյ, ասա ինձ, ի՞նչ է ուզում անել քո մասսա Վիլը մանգաղով եւ քլունգներով:

— Դուք ինձ այն էք հարցնում, ինչ որ ինքս չը գիտեմ. նա ինքն էլ, մասսա, ինձնից աւել չը գիտէ, սատանան տանի ինձ, եթէ այդպէս չէ: Այս բոլորը... բղէղիցն է:

Տեսնելով որ ոչինչ չեմ կարող հասկանալ Իւպիտէրից, որի գլխում սաստիկ խորն էր տեղաւորուել բղէղը, ես նրա տայ նաւակը եւ թողի արագաստները: Սաստիկ յաջողակ քա-

մին շուտով բերեց մեզ մի փոքր ծոց Մուկորի ամրոցից հիս-
սիս. այստեղից մօտ երկու մղոն անցնելով, մենք հասանք
խրճթին: Մօտ երեք ժամն էր զկնի ճաշուն, Լէգրանը ան-
համբերութեամբ սպասում էր մեզ. նա յուզուած եւ շտապով
սեղմեց ձեռքս, որով ինձ շատ վրդովեց ու սաստկացրեց իմ
կասկածներս: Նորա դէմքը մեռելի պէս գունատ էր. եւ ի
բնէ խորունկ աչքերը վառվում էին անսովոր կրակով: Առող-
ջութեան մասին մի քանի հարցեր տալուց լետոյ, ես հարցրի
նորան, սորանից ոչինչ առաւել յարմար բան չը գտնելով, վե-
րադարձրեց արդեօք Լէյտընան Գ...ն նորա բղէղը:

—Այո, այո, աղաղակեց նա, սաստիկ կարմրելով, ես
միւս օրն իսկոյն վերցրի նորանից: Այսուհետեւ այլ եւս եր-
բէք չեմ բաժանուելու այս բղէղից: Դուք գիտէք, Իւպիտէրը
բոլորովին իրաւացի էր:

—Ի՞նչպէս, հարցրի ես սրտիս տխուր նախազգացութեամբ:

—Այնպէս, որ այս բղէղն ամբողջապէս իսկական ոսկուցն է:

Նա այս ասում էր բոլորովին վստահաբար եւ այդ ինձ
անասելի ծանր թուաց:

—Այս բղէղին վիճակուած է իմ բաղտոս տնօրինելու,
շարունակեց նա հանդիսաւոր ժպիտով, — եւ մտցնելու ինձ
նորից իմ պապենական կալուածները: Ուրեմն, այստեղ ի՞նչ
զարմանալու բան կայ, որ ես նորան այնքան թանգ եմ գնա-
հատում: Որովհետեւ բաղտը յանձնեց ինձ նորան իբրեւ մի
արդիւնաւէտ միջոց, — ապա ուրեմն ինձ միայն մնում է վա-
րուել այնպէս, ինչպէս հարկն է. եւ ես կը համենմ ոսկուն,
որի կարապետն ահա սոյն այս բղէղն է հանդիսանում:

—Իւպիտէր, բեր այստեղ բղէղը:

—Ի՞նչ, բղէղը, պարոն, ես առաւել լաւ եմ համարում
ամենեւին չը խառնուել բղէղի գործում: առաւել լաւ է,
դուք ինքներդ վերցրէք նորան:

Սորանից յետոյ Լէգրանը վերկացաւ ծանր եւ հանգիստ-

ւոր կերպով եւ գնաց բղէղը բերելու, որ դրուած էր ա-
պակեայ կտր ծածկոցի տակ: Բղէղը հիանալի էր, եւ մինչեւ
այդ ժամանակը անձանօթ բնագէտներին: Նա վզի մի ծայ-
րին ունէր երկու սեւ կտրիկ բծեր, իսկ միւսի վրայ մի եր-
կայն բիծ. նորա թեւաթեփուկները շատ ամուր էին ու փայ-
լուն, եւ բոլորովին ողորկ ոսկու տեսք ունէին. բացի սորանից,
նա շատ ծանր էր: Այս ամենը ի նկատի առնելով, ես չէի
կարող շատ պախարակել Իւպիտէրին նորա հայացքի համար,
բայց ինչպէս կարող էր Լըգրանը համաձայնուիլ այս դի-
պուածում նորա հետ, ահա թէ ես ի՞նչ բան չէի կարողանում
հասկանալ, եւ թէկուզ կեանքիցս զրկուէի, բայց եւ այն-
պէս դարձեալ չէի կարող լուծել հանելուկը:

—Ես լաւ զննելով միջատը ուղարկեցի ձեզ կանչելու,
ասաց նա լուրջ կերպով. ես հրաւիրեցի ձեզ խորհուրդ հարց-
նելու, եւ որպէս զի դուք ներկայ լինէիք դիտաւորութիւնս
իրագործելուն վիճակիս եւ բղէղի վերաբերութեամբ:

—Սիրելի Լըգրան, բացագանչեցի ես, ընդհատելով նորա խօս-
քը, դուք ի հարկէ տկար էք եւ լաւ կանէք որ ձեր առողջու-
թեան մասին հոգաք եւ անկողին մտնէք: Ես մի քանի օր ձեզ
մօտ կը մնամ, մինչեւ դուք կաւոյ ջանաք. դուք տենդ ունիք եւ...:

—Շօշափեցէք զարկերակս, ասաց նա:

—Ես շօշափեցի, եւ ճշմարիտն ասած, տենդի ամենա-
փոքր նշոյլ անգամ չը գտայ:

—Բայց դուք կարող էք հիւանդ լինել, ամենեւին տենդ էլ
չունենալով: Թոյլ տուէք ինձ գոնէ այս անգամ ձեր բժիշկը լինե-
լու: Նախ եւ առաջ գնացէք եւ պառկեցէք անկողնում: Յետոյ...:

—Դուք սխալվում էք, ընդհատեց նա, — ես այնքան
լաւ եմ զգում, որքան հնար է մի այսպիսի յուզուած դրու-
թեան միջոցին, որի մէջ ես եմ գտնվում: Եւ եթէ դուք,
յիրաւի, ցանկանում էք ինձ բոլորովին առողջ տեսնել, թե-
թեւացրէք ինձ տանիք յուզմունքը:

—Ի՞նչ պէտք է անել:

—Շատ քիչ բան: Մենք Իւպիտէրի հետ կուղեւորուինք այն բլուրները, որ մայր—ցամաքի վրայ են: Մեզ անհրաժեշտ հարկաւոր է մի օգնական, որին կարողանայինք լիովին հաւատալ, եւ դուք էք այդ միակ անձն: Կը յաջողի մեր ձեռնարկութիւնը, թէ ոչ, ողջ մին է. բայց այն յուզմունքը, որ նկատում էք իմ մէջ,—կանհետանայ:

—Ես ամենամեծ պատրաստականութեամբ կը ծառայեմ ձեզ, աղաղակեցի ես. բայց ասացէք խնդրեմ, այս անիծեալ բղէզը մի որեւէ յարաբերութիւն ունի ձեր ճանապարհորդութեան հետ:

—Այո, ի հարկէ:

—Այդ դիպուածում, Լըգրան, ես բոլորովին չեմ կարող օգնել ձեզ ձեր յիմար ձեռնարկութեան մէջ:

—Ես ցաւում եմ, սաստիկ ցաւում եմ, որովհետեւ մենք ստիպուած կը լինինք միայնակ ոյժերս փորձել:

—Դ՞եւ, միայնակ. դժբաղդը խելագարուել է: Շատ լաւ, բայց քանի ժամանակ հարկաւոր կը լինի ձեզ դորա համար:

—Հաւանական է, որ ամբողջ գիշերը. մենք հէնց իսկոյն կուղեւորուինք. բայց եւ այնպէս լուսադէմին կը վերադառնանք:

—Եւ դուք ինձ ազնիւ խօսք էք տալիս, որ հէնց միայն ձեր երեւակայական ցնորքն անցնի, եւ բղէզի գործը, ո՞հ Աստուած իմ, վերջացած լինի, դուք կը վերադառնաք տուն եւ իսկութեամբ կը կատարէք իմ խորհուրդները, ինչպէս, եթէ կատարելիս լինէիք ձեր բժշկի խրատները:

—Այո, ես խոստանում եմ. իսկ այժմ ուղեւորուինք, որ ի զուր ժամանակ կը կորցնենք:

Ես, սիրտս ամրապնդելով, համաձայնուեցայ ուղեկցել բարեկամիս:

Ժամը չորսին—Լըգրանը, Իւպիտէրը, շունը եւ ես ճանապարհ ընկանք: Իւպիտէրն առաւ մանգաղը եւ քլունգները. նա անպատճառ ցանկանում էր, որ շուտով բեռնաւորէին նորան այդ գործիքներով, իմ կարծիքով, ոչ թէ չափազանց եռանդից, այլ այն երկիւղից, որ այդ գործիքները չը գձէր իւր տիրոջ ձեռքը: Մանաւանդ որ նորա հոգին սաստիկ յուզուած էր եւ բառերս—անիծեալ բղէզ, միակ բառերն էին, որ նա արտասանում էր ամբողջ ճանապարհի ընթացքում: Ինձ բաժին ընկաւ երկու խուլ գաղտնի լապտեր. իսկ Լըգրանը բաւականացաւ բղէզով որ տանում էր չուանի ծայրին կապած եւ ամբողջ ժամանակ ձեռնածուի նման պտոյտ ածելով իւր շուրջը: Ես հազիւ էի կարողանում արցունքներս պահել, նկատելով խելագարութեան այս ծայրայեղ նշանները: Բայց եւ այնպէս ես կարծում էի, որ առաւել լաւ կը լինէր գոհացնել նորա ցնորքը գոնէ մի առ ժամանակ, մինչեւ որ կարելի լինէր յուսալ յաջողութեամբ որ եւ է եռանդուն միջոց ձեռնարկելուն: Դժնապարհին ես փորձեցի, բայց բոլորովին ի զուր, իմանալու մեր ուղեգնացութեան նպատակը: Լըգրանը կարողացաւ ինձ իւր հետ տանել եւ այժմ մի առանձին տրամագրութիւն չունէր հետս խօսելու այդպիսի ջնջին առարկայի մասին: Իմ բոլոր հարցմունքներիս նա միայն արժանացրեց հետեւեալ պատասխանը. «կը տեսնենք, կը տեսնենք շուտով»:

Կըզու վերջին մենք նստանք նաւակը, անցանք ծովածոցի միջով եւ բարձրանալով հակառակ ափը գտնուող լեռնոտ տեղով, գնացինք հիւսիս-արեւմուտք, մի չափազանց վայրի եւ աւազոտ երկրով, ուր չէր կարելի մարդկային ոտքերի հետք տեսնել: Լըգրանը ինքնավստահ շարունակում էր

ճանապարհը եւ հազիւ երբեմն կանգ առնում, որ ստուգէր մի քանի նշաններ, որ կարծես թէ անուշադիր թողած լինէր իւր նախընթաց ճանապարհորդութեան ժամանակ:

Այսպէս գնացինք մօտ երկու ժամ: Արեւն արդէն հորիզոնի վրայ էր, երբ մենք մտանք մի առաւել չարագուշակ երկիր, քան այն, որ հէնց նոր էինք թողել: Սա բարձրավանդակի պէս մի բան էր, մի սարսափելի սեպածեւ լեռան մօտ, որ ստորոտից մինչ գագաթը ծածկուած էր անտառով. նորա վրայ զրուած ահագին քարաժայռերը կարծես ընկել էին երկրի վրայ պատահմամբ: Նոցանից մի քանիսը անշուշտ հովտից ներքեւ անդունդը պիտի գլորուէին, եթէ չը պահպանէին նոցա ճանապարհին բռնած ծառերը:

Ամենայն ուղղութեամբ ձգվում էին խոր ձորեր, որոնք մի տխուր — հանդիսաւոր տեսարան էին ներկայացնում:

Լայն տանետանը որի վրայ մենք բարձրացանք այժմ, այնպէս խիտ բուսել էր մորիով, որ առանց մանգաղի անկարելի էր ճանապարհը շարունակելու մասին մտածել: Իւպիտէրը իւր տիրոջ պատուէրի համաձայն սկսեց մաքրել մեր ուղին դէպի մի հսկայական տիւլպանի ծառի ստորոտը: Սա բարձրանում էր տանետանի վրա ութը կամ տասը կաղնիների միջից եւ գերազանցում էր նոցա բոլորին, — ինչպէս եւ իմ մինչեւ այդ ժամանակ տեսած ծառերից, ո՞չ միայն իւր ձեւի ու տերեւների գեղեցկութեամբ, այլ եւ իւր տերեւախիտ ոստերի անսովոր ընդարձակութեամբ եւ առ հասարակ իւր տեսքի վեհութեամբ: Երբ մենք մօտեցանք այդ ծառին, Լըգրանը դարձաւ Իւպիտէրին եւ հարցրեց թէ կարո՞ղ է բարձրանալ ծառը: Խեղճ ծերունին, երեւում էր, որ մի փոքր ապշած էր այս հարցով եւ մի քանի ժամանակ չը պատասխանեց: Բայց եւ այնպէս նա մօտեցաւ ահագին ընկն, եւ հանդարտ լաւ զննելով, պտտեց նորա շուրջը: Երբ նա իւր զիտողութիւնն աւարտեց, այն ժամանակ ասաց միայն.

— Այո, պարոն, Իւպը դեռ տեսած չունի մի այնպիսի ծառ, որի վրայ չը կարողանար բարձրանալ:

Ապա ուրեմն բարձրացիր: Դէհ, շուտով, որովհետեւ այնպէս կը մթնի, որ մենք չենք կարող տեսնել, թէ ինչ ենք անում:

— Բայց ո՞ր պիտի բարձրանամ, «մասսա», հարցրեց Իւպիտէրը:

— Նախ բարձրացիր ընի վրայ, իսկ յետոյ ես քեզ կասեմ, թէ որ ուղղութեամբ պէտք է առաջ գնաս: Կայ: Առ քեզ հետ բղէղը:

— Բղէղը, «մասսա» Վիլլ, Ոսկի բղէղը, աղաղակում էր նէգրը, երկիւղից յետույետ գնալով. — Ի՞նչ հարկաւոր է որ հետս քաջ տամ ծառի վրայ այդ բղէղը, թող անիծեալ լինիմ, եթէ որ այդ բանն անեմ:

— Իւպ, միթէ դու, հասակաւոր նէգրդ, որ առողջ եւ ուժեղ ես՝ վախենում ես մերձենալ մեռած եւ անվնաս այս փոքրիկ միջատին, թող այդպէս լինի, լաւ. դու կը բռնես նորան այս թելի ծայրից. բայց եթէ չես վերցնիլ նորան այսպէս կամ այնպէս, ես ստիպուած կը լինիմ անգուլթ քարասրտութեամբ ջախջախել քո գլուխը այս քունդով:

— Տէր Աստուած, այս ի՞նչ բան է, «մասսա», ասաց Իւպը, որին երեւում էր թէ ամօթը առաւել համարձակ էր դարձնում. — դուք միշտ նախատում էք ձեր հին նեգրին: Ես կատակ արի, ուրիշ ոչինչ: Ես, ես միթէ կը վախենամ բղէղից: Ես մոռացայ անգամ նորա մասին մտածելու:

Եւ նա բռնելով մեծ զգուշութեամբ չուանի ծայրը, եւ բռնելով միջատը այնքան հեռաւորութեամբ, որքան ներում էին հանգամանքները, սկսեց բարձրանալ ծառը:

Մատաղ հասակում տիւլպանիկը, ամերիքական անտառների ամենահիանալի ծառը, սաստիկ հարթ բուն ունի, եւ շատ յաճախ ահագին բարձրութեամբ աճում է չարձակելով

կողքերից ոստեր. բայց երբ նա հասունանում է, նորա կեղեւը դառնում է խորտ ու բորթ եւ անհաւասար, եւ բազմաթիւ փոքրիկ ոստիկներ երեւում են ընդ վրայ: Այս պատճառով ներկայ դիպուածում նա ներկայացնում էր միայն կարծեցեալ, քան իսկական դժուարութիւն: Գրկելով ահագին բունը ծընկներով, եւ ձեռքերով դուրս ցցուած ոստերից բռնելով, իսկ մերկ ոտներով ամրանալով միւս ոստիկների վրայ, Իւլիտէրը շուտով հասաւ ծառի առաջին ճեղքին եւ այժմ գործը համարում էր արիւթար աւարտած:

Յիրաւի, գլխաւոր վտանգն անցել էր, թէպէտեւ քաջ նեգրը գտնվում էր գետնից մօտ եօթանասուն ոտնաչափ բարձրութեան վրայ:

—Այժմ որ կողմը բարձրանամ, «մասսա» Վիլլ, հարցրեց նա:

—Նարունակիր բարձրանալ ամենահաստ ճիւղի վրայ, ահա այս կողմից, — պատասխանեց Լըգրանը:

Նէգրը անյապաղ հնազանդուեցաւ, եւ ըստ երեւութին, առանց մի մեծ նեղութեան բարձրանում էր աւելի ու աւելի վեր, այնպէս որ վերջապէս նորա դէմքը մերթ կձկուելով, մերթ ընդլայնուելով, անյայտացաւ տերեւախիտ ոստերի մէջ եւ նա բոլորովին թաղնուեցաւ: Վերջապէս, բարձրից լսուեցաւ նորա ձայնը, — նա աղաղակում էր.

—Այժմ էլի ուր պէտք է բարձրանամ:

—Ո՞րքան բարձր կըլինիս դու, հարցրեց Լըգրանը:

—Այնքան բարձր եմ, այնքան բարձր եմ, որ ծառի գագաթից տեսնում եմ երկինքը, աղաղակում էր նէգրը:

—Երկնքի վրայ նայելով բերանդ մի բաց անիր, այլ ուշագործեամբ լսիր այն, ինչ որ կասեմ: Նայիր ընկն եւ համարիր քո տակիդ ոստիկները այս կողմից: Քանի՞ ոստ ես անցել:

—Մէկ, երկու, երեք, չորս, հինգ: — Ես անցել եմ հինգ հաստ ոստ «մասսա», այս կողմից:

—Լաւ, բարձրացիր դարձեալ մի ոստ:

Մի քանի րոպէից յետոյ նորա ձայնը լսուեցաւ նորից: Նա իմաց էր տալիս, որ հասել էր մինչեւ եօթներորդ ոստը:

—Այժմ, Իւլ, աղաղակում էր Լըգրանը սաստիկ յուզուած, աշխատիր գնալ այդ ոստով որքան կարող ես առաջ: Եթէ մի որ եւ է առանձին բան կը նկատես, ձայն տուր ինձ:

Այս րոպէից սկսած եւ այն մի քանի կասկածները որ ունէի բարեկամիս խելագարութեան մասին, բոլորովին անյայտացան: Ես այլ եւս չէի կարող չը նկատել որ նա խելագար է, եւ սաստիկ մտատանջվում էի, թէ ի՞նչպէս կարողանամ նորան տուն տանել: Մինչդեռ ես մտածում էի, թէ ինչպէս առաւել լաւ կատարեմ մտադրութիւնս, նորից լսուեցաւ Իւլիտէրի ձայնը:

—Ես վախենում եմ այլ եւս առաջ գնալու այս ոստով. նա չոր է, գրեթէ չորացել է:

—Գու առում ես, որ այդ ոստը չոր է, Իւլիտէր. աղաղակում էր Լըգրանը յուզուած դողդոջուն ձայնով:

—Այո, «մասսա», ճշմարիտ որ այնպէս չոր է, ինչպէս դռան մեխը. այո, բոլորովին չորացել է, բոլորովին մեռել:

—Տէր Աստուած իմ, այժմ էլ ինչ պէտք է անեմ, հարցրեց Լըգրանը, կատարեալ յուսահատութեամբ:

—Ի՞նչ անէք, ասացի ես, ուրախանալով որ յարմար առթիւ խօսք կը գցեմ, — վերադարձէք տուն եւ պառկեցէք քնելու: Գնանք, սիրելի ընկեր, գնանք: Արդէն ուշ է, յիշեցէք ձեր խոստումը:

—Իւլիտէր, աղաղակում էր նա ամենեւին ուշք չը դարձնելով խօսքերիս, լսում ես դու իմ ձայնը:

—Այո, «մասսա» Վիլլ, շատ լաւ եմ լսում:

—Քերիր քո դանակով ծառը, եւ ասա թէ նա շատ է փթած:

—Փթած է, «մասսա», բաւականին փթած, պատասխանեց իսկոյնեւեռ նէգրը, բայց դեռ էլի այնպէս չէ փթած, ինչպէս կարող էր լինել:

— Ես կարող էի առաջ գնալ այս ոստի վրայ առաւել հեռու, բայց միայն մէկը...

— Մէկ... Ի՞նչ ես ուզում ասել դորանով:

— Ես կուզեմ ասել բզէզի մասին: Շատ ծանր է, բզէզը: Եթէ սորան վայր ձգեմ, ոստը ինձ լաւ կը դիմանայ. — միայն մի նէգրը չի կարող կոտորել ոստը:

— Անիծեալ աւազակ, աղաղակում էր Լըգրանը, որ այժմ բաւական սիրտ էր առել: Ի՞նչ ես գլխիցդ յիմար յիմար դուրս տալիս: Եթէ դու կը համարձակուիս վայր ձգել բզէզը, ես քո վիզդ կը թռցնեմ: Լաւ լսիր, Իւպիտէր, լսում ես թէ չէ:

— Այո՛, «մասսա», մի մեծ աշխատանք չէ հարկաւոր խեղճ նէգրի հետ այդպէս վարուելու համար:

— Դէ՛հ, ուրեմն, լսիր: Ահա թէ ինչ: Եթէ դու կը վստահանաս մի փոքր էլ առաջ գնալու այդ ոստով, այնպէս որ վայր չընկնիս չըմեռնես եւ ձեռքից չը թողնես բզէզը, ես քեզ կընծայեմ իսկոյնեւէտ արծաթեայ դօլլար, երբ ցած կիջնես գետնին:

— Առաջ եմ շարժվում, «մասսա» Վիլլ. ահաւասիկ, պատասխանեց իսկոյն նէգրը, — ես համարեա՞ ոստի ծայրին եմ:

Վերջը, աղաղակեց Լըգրանը մեղմանալով: Դու առում ես որ այդ ոստի ծայրին ես:

— Այժմ ես բոլորովին ծայրին եմ, այ օյ, օյ, օյ, տէ՛ր Աստուած: Վայ, վայ, վայ, այս ի՞նչ է ծառի վրայ:

— Դէ՛հ, աղաղակում է Լըգրանը բերկրութեամբ, ի՞նչ է այս տեղ:

— Ա՛յ, այ թէ ինչ է. մեռած գլուխ, մինը թողել է իւր գլուխը ծառի վրայ, իսկ անգղները կտցահարելով կերել են բոլոր միւսը:

— Գանգ, ասում ես դու: Դէ՛հ, լաւ: Ի՞նչպէս է նա ամրացած ոստի վրայ: Ինչո՞վ է նա պահվում:

— Այո՛, նա կպած է ամուր. պէտք է զննեմ: Ա՛յ հրաշք... Աստուած վկայ. գանգը ամուր մեխած է ծառին:

— Լաւ, այժմ, Իւպիտէր, ճիշտ այն արա՛, ինչ որ քեզ կ'ասեմ: Դու ինձ լսում ես:

— Այո՛, «մասսա»:

— Դէ՛հ, ուրեմն, լաւ լսիր: — Գտիր գանգի ձախ աչքը:

— Օ՛հ, օ՛հ, այ ծիծաղ: — Բայց սա բոլորովին ձախ աչք չունի:

— Անիծեալ անխելք: Գիտես դու քո աջ ձեռքդ ձախից զանազանե՛լ, թէ ոչ:

— Ի հարկէ, գիտեմ, շատ լաւ գիտեմ: Իմ ձախ ձեռքը այն է, ինչով փայտ եմ կոտորում:

— Ի հարկէ, դու հօ ձախլիկ ես. քո ձախ աչքը հէնց այն կողմն է, որտեղ է եւ քո ձախ ձեռքը: Այժմ, կարծեմ, դու կարող ես գտնել գանգի ձախ աչքը կամ այն տեղը, ուր ձախ աչքն էր: Գտա՛ր:

Հետեւեց երկար լուսթիւն: Վերջապէս նէգրը հարցրեց:

— Գանգի ձախ աչքն հէնց այն կողմն է, որ կողմը գանգի ձախ ձեռքն է բայց գանգը բոլորովին ձեռք չունի: Բայց այդ ոչինչ: Գտայ ձախ աչքը, — ահա՛ ձախ աչքը... Այժմ ի՞նչ անեմ:

— Անց կացրու բզէզը դուրս միջով, որքան կը հասնի թելը. բայց զգոյշ, ձեռքից չը թողնես չուանի ծայրը:

— Ահա՛, այդ էլ արեցի, «մասսա» Վիլլ. բզէզին աչքածաւով անցկացնելը հասարակ բան է, տեսէք, նա ցած է իջնում:

Ամբողջ խօսակցութեան միջոցին Իւպիտէրի պատկերը մնում էր անտեսանելի, բայց այժմ, չուանով վայր թողած միջատը փայլում էր ինչպէս ողորկուած ոսկէ գունդ արեւի մայր մոնող վերջին ճառագայթների միջոցին. արեւը դեռ էլի աղօտ լուսով լուսաւորում էր այն բարձրութիւնը, որի վրայ գտնվում էինք մենք: Ցած իջնող բզէզը երեւաց ոստերի միջից եւ ուղղակի մեր ոտքերի տակ կընկնէր, եթէ Իւպիտէրը բաց թողնէր: Լըգրանը իսկոյն վերցրեց մանգաղը եւ

հնձեց շրջանը երեք թէ չորս արշին դրամագծով, ուղիղ միջատի տակը: Աւարտելով այս աշխատանքը, նա հրամայեց Իւլիտէրին բաց թողնել ձեռքից չուանը եւ ցած իջնել ծառից:

Ամենամեծ խնամքով բարեկամս ցցեց գետնի մէջ երիթներ, հէնց այնտեղ, ուր ընկաւ բղէզը. յետոյ հանեց գրպանից երկրաչափական երիզը: Նա երիզի մի ծայրը կապեց ծառի ընկն, երիթից ամենամօտ տեղը, յետոյ ձգեց նորան երիթների վերայից եւ այս տուած երկու կէտերի (երիթների եւ ընկ) ուղղութեամբ չափեց յիսուն ոտնաչափ տարածութիւն: Այս միջոցին Իւլիտէրը հնձում էր մորին եւ ճանապարհը մաքրում: Այգալիսով գտնուած կէտում Լըգրանը ցցեց երկրորդ երիթը եւ նորա շուրջը իբրեւ կեդրոնի գծագրեց մօտ չորս ոտնաչափ դրամագիծ ունեցող շրջան: Յետոյ վերցրեց քլունգը, եւ մէկ մէկ էլ ինձ ու Իւլիտէրին տուեց եւ մենք սկսեցինք բաւական եռանդով փորել:

Ճշմարիտն ասած, ես ամենեւին բաւականութիւն չէի գտնում այգալիսի զբաղմունքի մէջ եւ ներկայ դիպուածում առանց դորան էլ կարող էի բաւականանալ: Դիշերը վրայ հասաւ եւ ես զգում էի ինձ բաւականին յոգնած կատարած աշխատանքիցս. բայց ես ոչ մի միջոց չէի գտնում ձեռք վերցնելու դորանից, իսկ իմ հրաժարականով վախենում էի, որ չը խանգարեմ խեղճ բարեկամիս հրաշալի անդորրութիւնը: Եթէ ես կարողանայի յուսալ Իւլիտէրի բարեկամութեան վրայ, ես չէի դանդաղիր ուժով տուն տանելու մեր խելագարին, բայց ես շատ լաւ ճանաչում էի ծեր նէգրի բնութիւնը, որ կարողանայի յուսալ նորա մասնակցութեան վրայ իւր տիրոջ հետ անձնապէս կռուելիս, ինչ հանգամանքներումն էլ որ լինէր:

Ես այլ եւս չէի կասկածում, որ Լըգրանի ուղեղը վարակուած էր հարաւի անթիւ առասպելական պատմութիւններով թագուցած գանձերի մասին: Բղէզի գիւտը կամ մինչեւ անգամ շատ կարելի է, Իւլիտէրի յամառ կարծիքը, թէ

այս բղէզը մաքուր ոսկուցն է շինած, բոցալառում էին միայն նորա երեւակայութիւնը:

Խելագարութեան հակումն ունեցող խելքը դիւրաւ կարող է գրաւուիլ դոյնալիսի դրդումներով, մանաւանդ եթէ նոքա համաձայն են նորա սիրած նախապաշարումներին. յետոյ ես յիշում էի խեղճ թշուառի խօսքերը բղէզի մասին որ իբր թէ նորա երջանկով թեան նշանաբանն էր: Այս ամենը ինձ շատ ցաւեցնում եւ վրդուում էր, բայց եւ այնպէս ես որոշեցի խոնարհիլ ճակատագրին եւ յօժարութեամբ փորել, որպէս զի կարողանամ համոզել իմ ցնորամիտ բարեկամիս, որքան կարելի է շուտ թէ նա ցնորքների ակներեւ ունայնութեան մէջէ է:

Մենք վառեցինք լապտերները եւ սկսեցինք մեր աշխատանքը եռանդով եւ սիրով, որ վայել էր առաւել խելացի գործին: Լոյսն ընկնում էր մեր երեսների ու գործիքների վրայ: Ես չէի կարող չը մտածել եւ այն բանի մասին, որ մենք կազմում էինք կատարեալ գեղարուեստական խումբ եւ եթէ մի անկոչ հիւր մի կերպով ընկնէր մեզ մօտ, մենք նորան կերեւայինք բաւականին տարօրինակ եւ կասկածելի աշխատանքով զբաղուած: Մենք երկու ժամ շարունակ անընդհատ փորում էինք եւ քիչ էինք խօսում: Միակ վրդուիմունքը պատճառում էր մեզ շան հաջողը, որ չափազանց մեծ մասնակցութիւն էր ընդունում մեր աշխատանքի մէջ: Վերջապէս նա այնպէս անկերջ հաջել սկսեց, որ մենք կասկածեցինք, թէ կարող է անհանգստացնել մօտերումը գտնուող թափառաչրիկներին: Այս բանից մանաւանդ սաստիկ վախենում էր Լըգրանը, իսկ ես իմ կողմից ուրախ կը լինէի յարմար առիթ գտնելու, որ միջոց կը տար ինձ տուն տանելու իմ յիմարին: Ի վերջոյ ազմուկը դադարեց շնորհիւ Իւլիտէրի, որ դուրս թռչելով փոսից խիտ փճաւանութեամբ, իւր գօտիից դնչկալ շինեց եւ ձգեց կենդանու վրայ. ապա նա նորից սկսեց իւր

զբաղմունքը հանդիսաւոր ժպիտով:

Երկու ժամից յետոյ մենք հասանք հինգ ոտնաչափ խորութեան, սակայն գանձի մի ամենափոքր նշոյլ անգամ չէր երեւում: Մենք մի փոքր հանգիստ առանք եւ սկսեցինք յուսալ, որ այս կատակը շուտով կը վերջանայ: Լըգրանը թէ եւ ըստ երեւութիւն լաւ տրամադրութեան չէր, այնուամենայնիւ տխրամաճ դէմքով սրբեց ճակատից հոսող քրտինքը եւ նորից սկսեց աշխատել: Մեր փոսը արդէն բռնած ունէր շրջանի ամբողջ տարածութիւնը, որի տրամագիծը չորս ոտնաչափ էր. մենք մի փոքր անցանք այդ սահմանից եւ փորեցինք գետինը դարձեալ երկու ոտնաչափ: Ոչինչ չէր երեւում: Իմ ոսկէ-խն գիրը, որին ես բոլորովին խղճացի, դուրս թռաւ վերջապէս փոսից դէմքի ամենասարսափելի յուսահատ արտայայտութեամբ եւ վճռեց դանդաղ եւ կարծես թէ ափսոսալով հագնել իւր հագուստը, որ նա բանելուց առաջ, հանել էր: Սկիւզ որ ինձ կը վերաբերի, ես մեծ զգուշութեամբ խուսափում էի մի որեւէ նկատողութիւն անելուց: Իւպիտէրը, իւր պարոնի նշանի համաձայն, սկսեց ժողովել գործիքները: Երբ այդ էլ կատարուեցաւ եւ շնիցն էլ յետ արաւ դնչկալը, մենք խորին լռութեամբ ճանապարհ ընկանք: Հազիւ մի քանի քայլ էինք արել, երբ յանկարծ Լըգրանը սարսափելի հայհոյանքներ թափելով՝ ընկաւ Իւպիտէրի վրայ եւ բռնեց նորա օձիքից: Չարհուրած նէգրը զարմանքից չռեց աչքերը եւ բերանը բանալով վայր ձգեց ձեռքից քլունգները եւ ծունկ չորեց:

— Չարագործ, աղաղակում էր Լըգրանը, զայրոյթից առամները կրճտացնելով, սատանաների թագաւոր, սատանի լակոտ, շուտ աստ, ասում եմ քեզ: Պատասխանիր ինձ այս բոպէիս. իսկ որ գլխաւորն է, գլխիցդ բաներ մի դուրս տար, խօսիր ճշմարիտը: Ի՞նչ... Ո՞րն է քո ձախ աչքդ...

— Ա՛խ, ներեցէք, «մասսա» Վիլլ: Այստեղ ինչո՞վ է մեղաւոր իմ ձախ աչքը, հառաչում էր վախեցած Իւպիտէրը, յուսա-

կտուր ծածկելով ձեռքով տեսողութեան աջ գործարանը, կարծես թէ նա վախենում էր, որ պարոնը չը ցանկանար նորան հանելու:

— Ես կասկածում էի դորանում: Ես լաւ գիտէի այդ: Կեցցէ, գողում էր Լըգրանը, ձեռքից թողնելով նէգրին եւ անվերջ ցայտումներ անելով, ի մեծ զարմանս իւր ծառային, որ գետնից վեր կենալով, առանց մի խօսք ասելու, կամ ինձ վրայ էր նայում, կամ իւր պարոնի:

— Գնանք, — մեզ հարկաւոր է վերադառնալ, ասաց այս վերջինս. գործը դեռ տանուլ տուած չէ:

Եւ նա նորից գնաց դէպի տիւլպանի ծառը:

— Իւպիտէր, ասաց նա, երբ մենք հասանք ծառի ոտոքը, եկ այստեղ: Ամրացրած էր արդեօք գանգը ոստի վրայ երեսը դուրսը դարձրած, թէ երեսը դարձած էր դէպի ոստերը:

— Դէմքի մասը դարձած էր դուրսը, այնպէս որ ագռաւները առանց դժուարութեան կարող էին հանել նորա աչքերը:

— Լաւ: Ուրեմն ո՞ր աչքով անցկացրիր բզէզը:

Եւ Լէգրանը կարգով շօշափեց Իւպիտէրի երկու աչքերը:

— Այս աչքով, «մասսա», ձախ աչքի միջով, հէնց այնպէս, ինչպէս դուք ինձ հրամայեցիք:

Եւ այս անգամն էլ խեղճ նէգրը ցոյց տուեց դարձեալ իւր աջ աչքը:

— Գնանք, գնանք, մեզ հարկաւոր է նորից սկսել:

Այն ժամանակ բարեկամս, որի խելագարութեան մէջ այժմ տեսնում էի կամ կարծում էի տեսնել կանոնաւորութեան մի քանի նշոյլներ, յետ տարաւ մեխը, որ ցոյց էր տալիս բզէզի ընկնելու տեղը երեք դիւլիմ նորա առաջուան դիրքից դէպ' արեւելք: Չգելով նորից իւր թելը նոյն իսկ ծառի բնից մինչեւ մեխը, ինչպէս այս տրդէն անում էր, եւ շարունակելով նորան ձգել ուղիղ գծով յիսուն ոտնաչափ տարածութեան

վրայ, նա նշանակեց նոր տեղ, որ հեռու էր մի քանի ետրդ այն տեղից, ուր մենք մի ժամառաջ փորում էինք գետինը:

Այս նոր կեդրոնի շուրջը նորից գծագրուեցաւ շրջան, առաջուանից մի փոքր լայն, եւ մենք սկսեցինք նորից աշխատել թխակով: Ես սաստիկ յոգնեցի, բայց ինքս ինձ հաշիւ չը տալով մտքերիս փոփոխութեան մասին, այլ եւս այնպիսի զգուանք չէի զգում դէպ ինձ առաջարկուած աշխատանքը: Անգիտակցաբար գրաւուել էի դորանով. մինչեւ անգամ աւելի եւս. ես զգում էի ինձ գրգռուած: Կարելի է Լրգրանի տարօրինակ վարմունքի մէջ կար մի որոշ վստահութիւն, յայտնի մարգարէական ոգի, որոնք ազդեցին ինձ վրայ: Ես բանում էի եռանդով, եւ ժամանակ առ ժամանակ նկատում էի որ մտքերս կաշկանդուած են այդ գանձով, որոնելով, այդպէս ասել ազատ հայեացքներովս ակնկալութեան զգացմունքով այդ կարծեցեալ գանձը, որի երազը խելքից հանել էր թշուառ ընկերոջս: Այդպիսի բոպէներից մէկի միջոցին, երբ այդ ցնորքներն առանձնապէս տիրել էին ինձ, եւ երբ մենք արդէն բանել էինք մօտ ժամ ու կէս, մենք դարձեալ լսեցինք շան հաջողը: Առաջին դիպումումս նորա վրդովմունքը առաջ էր գալիս ըստ երեւութիւն քմահաճութիւնից կամ անխմաստ յիմար ուրախութիւնից, բայց այս անգամ այդ վրդովմունքը ընդունում էր առաւել ուժեղ, առաւել տարօրինակ ձեւ: Երբ որ Իւպիտէրը նորից ուզում էր նորան հազցնել դնչկալը: Նա սկսեց սաստիկ ընդգգիմանալ եւ թռչելով փոսը, սկսեց կատալութեամբ փորել գետինը: Մի քանի վայրկեանում նա հանեց մարդկային ոսկորների մի կոյտ, որոնք կաղմում էին երկու լիակատար կմախք, խառն մետաղեայ կոճակներով եւ մի նիւթով, որ նման էր հին քրդի: Քլունգի մի երկու հարուած դուրս թուցրին իսպանական մեծ դանակի կոթը. մենք սկսեցինք փորել աւելի խորը եւ տեսանք մի քանի ոսկու եւ արծաթի դրամներ:

Այս տեսնելով, Իւպիտէրը հազիւ էր կարողանում իւր ուրախութիւնը պահել, բայց նորա պարոնի դէմքը արտայայտում էր սարսափելի հիասթափում: Չը նայելով սորան, նա խնդրեց մեզ շարունակել մեր գործը, բայց հազիւ աւարտել էր խօսելը, որ ես տատանուեցայ եւ ընկայ. կօշկիս քիթը դիպցրի մի մեծ երկաթի օղակի, որ մինչեւ կէսը ծածկուած էր թարմ հողով: Նոր ոյժերով սկսեցինք մենք գործը. երբէք ես չէի ունեցել այդպիսի վրդովող բոպէներ: Բայց եւ այնպէս մենք բոլորովին դուրս փորեցինք մի երկայնաձեւ սնդուկ, որը, պէտք է որ ենթարկուած լինէր որեւէ քիմիական գործողութեան, որովհետեւ զարմանալի ամուր էր պահպանուած:

Այս մտուկը, երեք եւ կէս ոտնաչափ երկայնութեամբ, երեք լայնութեամբ եւ երկուս ու կէս ոտնաչափ խորութեամբ, ամուր կապկպուած էր երկաթի շերտերով, որոնք ամրացած էին մեխերով եւ գոյացրել էին նորա մակերեւոյթի վրայ վանդակի նման մի բան: Մտուկի ամեն մի կողքից, նոյն իսկ կափարիչի մօտ գտնվում էր երեք երեք երկաթի օղակ, — ընդամենը վեց, որոց օգնութեամբ վեց մարդ միասին կարող էին բարձրացնել այն: Չը նայելով մեր բոլորիս միացեալ ոյժերին, մենք հազիւ կարողացանք տեղից շարժել: Մենք խսկոյն հասկացանք այդպիսի ծանրութիւն բարձրացնելու անկարելիութիւնը: Բարեբաղդաբար կափարիչն ամրացած էր երկու սողնակով, որոց եւ մենք շտապեցինք յետ քաշել, յուզմունքից դողալով եւ շնչառառ լինելով: Մի բոպէում անգին գանձերը խրեանց լիակատար փայլով հանդիսացան մեր աչքի առաջ: Լապտերների լոյսն ընկնելով փորած փոսում եւ ցոլանալով ոսկիների եւ թանկագին քարերի վրայ, իւր փայլով բոլորովին կուրացնում էր մեզ:

Ես չեմ փորձիլ նկարագրելու այն զգացմունքները, ելբ ես զմայլվում էի գանձով. ի հարկէ, ապշութիւնը գերազանցում էր բոլոր մնացեալներին: Լրգրանը երեւում էր թուլացած

իւր գրգռուած դրութիւնից եւ կարողացաւ արտասանել միայն մի քանի բառ: Խնչ կը վերաբերի Իւպիտէրին, նա այնպէս սոսկալի գունատ էր, որպէս կարող է լինիլ նէգրը: Նա թուում էր բոլորովին խելքը կորցրած, կարծես կայծակնահար եղած լինէր: Շուտով նա ծուռիկ չոքեց սնդուկի առաջ եւ խորասուզելով իւր մերկացած ձեռքերը մինչեւ արմունկը ոսկու մէջ, երկար ժամանակ մնում էր այդպէս, կարծես հիանում էր լուացման հրճուանքով: Վերջապէս նա խոր հառաչելով աղաղակեց, կարծես թէ ասում էր ինքն իրան:

— Եւ այս բոլորը տուել է ոսկի բզէզը: Հիանալի ոսկի բզէզ: Խեղճ ոսկի բզէզիկ, որին մի քանի ժամ առաջ անիծում եւ հայհոյում էի: Եւ դու ինքդ քեզանից չես ամաչում ծերունի: Դէհ, ապա հիմա ի՞նչ կասես:—

Սակայն ինձ հարկաւոր էր զարթեցնել այս կաշկանդուած թմրութիւնից թէ պարոնին եւ թէ ծառային, ստիպել նոցա հասկանալու, թէ ինչպէս անհրաժեշտ կարեւոր էր շուտով տանելու այստեղից գանձերը: Արդէն ուշ էր, եւ մենք պէտք է շտապով սկսէինք գործը, եթէ ուզում էինք որ ամեն ինչ ապահով եւ անվտանգ լինէր տանը մինչեւ լուսադէմը: Մենք չը գիտէինք, թէ ի՞նչ անենք եւ բաւականին շատ ժամանակ կորցրինք զանազան խորհրդածութեանց վրայ, որովհետեւ մեր մտքերը սարսափելի անկարգութեան մէջն էին: Վերջապէս մենք հանեցինք սնդուկից նորա պարունակուածի երկու երրորդ մասը եւ այդպիսով թեթեւացնելով, կարող էինք, յիշաւի, մեծ դժուարութեամբ դուրս հանել նորան փոսից: Այնտեղից հանած առարկաները թագքրինք տատակի թփերում, իսկ նոցա պահպանութիւնը յանձնեցինք շանը, որին Իւպիտէրը խստիւ հրամայեց ամենեւին տեղից չը շարժուելու առանց այլ եւ այլութեան եւ բերանն անգամ չը բանալու մինչեւ մեր գալուստը: Սորանից յետոյ մենք արագութեամբ ճանապարհ ընկանք,

տանելով հետներս սնդուկը՝ մենք հասանք խրճիթը առանց որ եւ է արկածի հանդիպելու, բայց սաստիկ յոգնած, գիշերուայ ժամի մէկին: Այդպիսի թուլացած դրութեան մէջ մենք չէինք կարող իսկոյն մեր գործին ձեռք զարկել, — այդ մեր ոյժերից վեր էր: Մենք հանգստացանք մինչեւ երկու ժամը, ապա ընթրեցինք. ի վերջոյ ուղեւորութեանը նորից լեռները, մեզ հետ առնելով երեք մեծ պարկ, որոց բարեբաղդաբար գտանք խրճիթում: Երբ մենք տեղ հասանք, դեռ չորս ժամը չը կար. ապա մենք ըստ կարելոյն հաւասար բաժանեցինք տւարի մրնացորդը, եւ ուղեւորութեանը դէպի մեր խրճիթը, ուր երկրորդ անգամ ներս տարանք մեր թանկագին բեռները, հէնց ուղիղ այն ժամանակ, երբ արեւի առաջին ճառագայթները երեւացին արեւելքում, ծառերի գագաթների վրայ:

Գ.

Սաստիկ յոգնելուց մենք մեզ բոլորովին քարգուած էինք ղգում: միայն սաստիկ յուզմունքը արգելում էր մեզ բոլորովին հանդարտուելու: Երկու թէ երեք ժամուայ անհանգիստ քնից յետոյ, մենք վերկացանք, կարծես սկզբից միմեանց խօսք տուած լինէինք, որ սկսենք մեր գանձի կարգի բերելը:

Մնդուկը մինչեւ բերանը լիքն էր, եւ մենք անցուցինք մի ամբողջ օր եւ յաջորդ գիշերուայ մեծ մասը, նորա մէջ գտնուող առարկաների ցանկը կազմելով: Այդ իրերը դրուած էին առանց որեւէ կարգ ու կանոնի, խառն ի խառն. ամեն ինչ ածել էին, ինչպէս պատահել էր: Ընդհանուր ցանկը կազմելուց յետոյ մենք մեզ այնպիսի նշանաւոր հարստութեան տէր ճանաչեցինք, որ մեր բոլոր անկալութիւններից վեր էր: Միայն առ ձեռն դրամը չորս հարիւր յիսուն հազար (450000)

դօլլար էր, *) գնահատելով դրամների արժեքը մեր ժամանակի դրամական ընթացքով: Եւ այս ահագին գումարի մէջ՝ ոչ մի արծաթի կտոր: Դոքա բոլորը մի միայն հին ժամանակների ոսկէ դրամներ էին եւ շատ բազմազան. ֆրանսիական, իսպանական եւ գերմանական, մի քանի անգլիական գինէյ, մի քանի ժէտօններ, որոնց նմանը մենք երբեք չէինք տեսած: Կային մի քանի շատ մեծ եւ շատ ծանր դրամներ, բայց այնպէս հին, մաշուած, որ չէր կարելի նոցա մակագիրները կարդալ: Ո՛չ մի ամերիքական դրամ չը կար. ինչ կը վերաբերի թանկագին քարերի գնահատութեան, այս առաւել դժուար գործ էր: Մենք գտանք բրիլլիանտներ, որոնցից մի քանիսը հրաշալի գեղեցկութիւն ունէին եւ սաստիկ մեծ, — ընդ ամենը հարիւր տասը քար, եւ նոցա մէջ ոչ մի հատ փոքրիկ քար չը կար: Տաճարութիւն սաստիկ փայլուն կարկէհան, երեք հարիւր տասն հիւսիսի զմրուելի տներ մէկը միւսից լաւ. քսան եւմէկ շափիւղայ եւ մէկ արեւակն: Այս բոլոր ահները հանուած էին շրջանակներից եւ անկարգ ձգուած մնդուկում: Ի՛նչ կը վերաբերի նոյն այդ շրջանակներին, որոնք գրուած էին մեր ցուցակում միւս ոսկուց առանձին, նոքա ըստ երեւութին ջարդուած էին մրձով, որ նոցա բոլորովին անկարելի լինէր ձանաչել: Բացի սորանից կային ահագին քանակութեամբ ծանրակշիռ ոսկի զարդեր. մօտ երկու հարիւր միապաղաղ մատանիներ եւ օդեր, գեղեցիկ շղթաներ որքան եւ յիշում եմ, մօտ երեսուն հատ, ութսուն եւ երեք մեծ եւ ծանր խաչեր, հինգ ոսկէ բուրլառ նշանաւոր արժողութեան, ահագին ոսկէ թաս, զարդարուած գեղեցիկ փորագրուած խաղողի տերեւներով եւ բաքոսի երկրպագուհիների պատկերներով, երկու հիւսիսի շինուած թրի կոթեր, եւ ահագին

*) Մի դօլլարը հաւասար է մի բուրլի քսան կոպէկարծաթի:

քանակութիւն ուրիշ աւելի փոքր առարկաների, որոնց մի առ մի եւ չեմ կարող յիշել: Այս բոլոր թանկագին իրերի քաշը երեք հարիւր յիսուն գրուանքայից աւելի էր: Սոյն այս գնահատութեան ժամանակ եւ մոռացայ յիշել հարիւր իննսուն եւ եօթը (197) գեղեցիկ ոսկի ժամացոյցների մասին, որոնցից միայն երեքն արժէին հինգ հինգ հարիւր դօլլար իւրաքանչիւրը: Նոցանից շատերն, ի հարկէ, հին էին եւ նոցա ներքին կազմուածքը բանի պէտք չէր, որովհետեւ քիչ թէ շատ փչացել էր հողի մաշող ներգործութիւնից. բայց այս բոլոր ժամացոյցները զարդարուած էին հիւսիսի թանկագին քարերով, եւ նոյն իսկ ժամացոյցների խուփերը շատ թանգ արժէին: Այս գիշեր մենք գնահատեցինք մնդուկի մէջ գտնուածը միլիօն ու կէս դօլլար (1,500,000 դօլ): Վերջերում, երբ ծախու հանեցինք թանկագին քարերը, թողնելով նոցանից մի քանիսը մեր սեփական գործածութեան համար, — մենք տեսանք, թէ որքան փոքրացրել էինք զանձի իսկական արժէքը: Երբ մենք կարգի բերինք մեր ցուցակը եւ երբ մեր յուշմունքը բաւականին հանդարտուեցաւ, Լըգրանը, տեսնելով որ սրտատրոփ եւ անհամբեր սպասում եմ իմանալու այս հրաշալի հանելուկի գաղտնիքը, պատմեց սոյն գործին վերաբերեալ բոլոր մանրամասն հանգամանքները:

— Դուք յիշում էք, ասաց նա ինձ, — այն գիշերը, երբ ձեզ տուի բզէզից հանած նկարը: Նաու կարելի է, դուք յիշում էք նոյնպէս, որ ես շատ վիրաւորուեցայ ձեզնից, երբ ինձ հաւատացնում էիք, թէ իմ նկարս շատ նման է մեռած գլխի: Սկզբում, երբ ձեզնից լսեցի այդ կարծիքը, ես կարծեցի որ դուք կատաք էք անում. ապա յիշելով միջատի մէջքի վրայ եղած սարսափելի բծերը, եւ մտածեցի, որ ձեր նրկատողութիւնը գոցէ եւ արդարացի է: Բայց եւ այնպէս ձեր ծաղրաբանութիւնը իմ նկարչական ընդունակութեանց վերաբերութեամբ սաստիկ անպատուեց ինձ, որովհետեւ առ

Հասարակ ամենքն Համարում են ինձ բաւականին լաւ նկարիչ. այդպէս ուրեմն, երբ դուք տուիք մագաղաթի կտորը, ես բարկութիւնիցս պատրաստ էի տրորել նորան եւ կրակը ձգել:

—Դուք ուզում էք ասել թ զ թ ի կտորը, ասացի ես:

—Ո՛չ, արտաքին տեսքից, իրօք, այդ թուղթ էր, եւ ես էլ սկզբում այդպէս կարծեցի, բայց յետոյ երբ ես սկսեցի նկարել, իսկոյն տեսայ որ նա բարակ մագաղաթի կտոր էր: Դուք յիշում էք, ի հարկէ, թէ ինչպէս նա կեղտոտ էր: Հէնց այն րոպէին, երբ ես ուզում էի կրակը ձգել, իմ հայացքս ընկաւ ձեր տեսած նկարի վրայ, եւ դուք կարող էք երեւակայել իմ զարմանքս, երբ ես տեսայ մեռած գլխի նման մի պատկեր, հէնց այն տեղում, ուր ես նկարել էի բզէզը: Ես այնպէս ապշած էի, որ առաջ չը կարողացայ խելքս գլուխս հաւաքել: Ես իմացայ, որ իմ նկարը մանրամասնութեանց մէջ տարբերվում էր այս նկարից, բայց ընդհանուր գծագիրների մէջ որոշ նմանութիւն կար: Այն ժամանակ ես վերցրի մոմը եւ սենեակի միւս ծայրը մեկուսանալով, սկսեցի մեծ ուշադրութեամբ ուսումնասիրել մագաղաթը: Դարձնելով նորան միւս կողմը, ես տեսայ իմ նկարը հէնց այնպէս, ինչպէս նկարել էի սկզբում: Սկզբում ես շատ զարմացած էի. յիրաւի շատ մեծ նմանութիւն կար շրջագծում, բայց ի՞նչ տարօրինակ էր այս զուգադիպութիւնը՝ ինձ անյայտ գանգի պատկերի նկարած մագաղաթի միւս կողմը, իմ բզէզի պատկերի հետ, մանաւանդ որ զուգադիպութիւնը ոչ միայն շրջագծի մէջն էր, այլեւ երկու նկարների համաչափութեան մէջ: Ես ասացի արդէն, որ այս երկու նկարների տարօրինակ նմանութիւնը մի առ ժամանակ ապուշ կտրեց ինձ: Խելքը ձգտում է որոնելու պատճառի եւ գործողութեան մէջ եղած կապը, յարաբերութիւնը. բայց իրան անգոր զգալով, ենթարկվում է մի ինչ որ րոպէական կաթնաճիւղ: Բայց երբ ազատուեցայ այդ ապ-

շութիւնից, ես զգացի, թէ ինչպէս յղացաւ իմ մէջ մի միտք, որ ինձ առաւել ապշեցրեց, քան այն զուգադիպութիւնը: Ես պարզ յիշում էի, որ մագաղաթի վրայ ոչ մի նկար չը կար, երբ ես իմ ուրուագիծն էի քաշում: Ի վերջոյ, այս բանում ես բոլորովին համոզուեցայ. ես յիշեցի, թէ ինչպէս շուռու մոռ էի տալիս, նորա վրայ մաքուր տեղ որոնելով: Իհարկէ, ես անշուշտ կը նկատէի գանգի պատկերը, եթէ նա լինէր: Յիրաւի, այստեղ մի որ եւ է գաղտնիք կար, որը լուծելու ես ինձ անգոր էի զգում: Այս ժամանակից սկսած, ինձ թւում էր, որ ես լուսոյ մի աղօտ կայծ եմ տեսնում իմ մտքիս գաղտնարանում, մի ինչ որ ոգեղէն փայլ,—մի նորածին հասկացողութիւն ճշմարտութեան մասին, որ այնպէս շլացուցիչ փայլով բացուեցաւ մեր առաջը անցեալ գիշեր: Այն ժամանակ ես համարձակ վեր կացայ, մեծ խնամքով թագցրի մագաղաթը, եւ վճռեցի այլեւս սորա մասին չը մտածել մինչ այն րոպէն,—երբ ես մենակ կը մնամ:

—Երբ որ բոլորեքեան գնացին եւ Իւպիտէրը լաւ քնեց, ես ձեռնարկեցի սոյն գործի առաւել մեթօդի քաջար հետազոտութեան: Առաջ ես ուղեցայ իմանալ, թէ ինչպէս ձեռքս ընկաւ այս մագաղաթը:

—Այն տեղը, ուր մենք բզէզը գտանք, գտնվում է ցամաքի եզերքին, կղզուց մօտ մի մղոն հեռու դէպ՝ արեւելք, բայց ծովի մակերեսից փոքր հեռաւորութեամբ: Երբ ես բռնեցի բզէզը, նա ինձ սաստիկ խայթեց, եւ ես ձեռքիցս թողի նորան: Իւպիտէրը իւր սովորական զգուշութեամբ քան միջատը վերցնելը, որը թուաւ նրա կողմը, սկսեց իւր շուրջը թուղթ, որով կարողանար բռնել նորան: Այլ րոպէին մեր հայացքներն ընկան մագաղաթի կտորի վրայ, որ ես այն ժամանակ թղթի տեղ ընդունեցի: Կիսով չափ նա ծածկուած էր աւազով, եւ գորա միայն մի ծայրն էր դուրս եկել: Այս տեղի մօտ, ուր մենք գտնվում էինք, ես նկատե-

ցի նաւարկղի մնացորդ, որքան ես կարողացայ ճանաչել: Հաւանական է, որ այս կտորները ընկած էին այստեղ երկար ժամանակ, որովհետեւ նոցա միջից մեծ դժուարութեամբ կարելի էր զանազանել նաւարկղը:

—Իւրիտէրը բարձրացրեց մագաղաթը, փաթաթեց նորանով միջատին եւ տուեց ինձ: Մի քանի ժամանակ անցնելով, գնացի մեր խրճիթի ճանապարհով, ուր պատահեցինք Լէյտնան Գ. ին: Ես ցոյց տուի նորան միջատը եւ նա խնդրեց ինձ թոյլտուութիւն տանելու նորան իւր հետ ամրոցը: Ես համաձայնեցայ եւ նա դրեց միջատը բաժկոնակի գրպանը առանց մագաղաթի, որ ես բռնած ունէի ձեռքիս, մինչեւ որ նա զննում էր միջատը: Կարելի է վախենում էր նա, որ խօսքիցս յետ կանգնէի, եւ ուրեմն առաւել լաւ էր համարում շուտով նորան տիրանալու. դուք պիտի գիտենաք, որ նա չափազանց սիրում է բնական գիտութիւնները, եւ այն ամենը, ինչ վերաբերում է նոցա. հասկանալի է, որ այս ժամանակ բոլորովին անգիտակցաբար, ես դարձեալ դրի մագաղաթը գրպանս:

—Դուք յիշում էք, որ երբ նստեցի սեղանի առաջ բզէզ նկարելու, թուղթ չը գտայ այնտեղ, ուր սովորաբար պահում եմ: Ես նայեցայ արկղը, բայց այնտեղ էլ ոչինչ չը կար: Ես սկսայ շօշափել գրպաններս, յուսալով այնտեղ մի որ է հին նամակ գտնել, այն ժամանակ ձեռքս ընկաւ մագաղաթը: Ես նոր հար եմ հաղորդում ձեզ այս հանգամանքների ամենամանրամասնութիւնները, պատճառ որ նոքա մանաստիկ յուզեցին իմ միտքս:

Նկատւած, դուք ինձ կը համարէք իբրեւ մի ցնորամիտ մարդ, —բայց ես արդէն որոշ կապ սահմանեցի այս երկու երեւոյթների մէջ: Ես միացրի մի մեծ շղթայի երկու օղակը: Խորտակուած նաւարկղը եզերքին, եւ այդ նաւարկղից ոչ հեռու մագաղաթ, բայց ոչ թուղթ, գանգի նկա-

րով: Նստ բնական է, որ դուք ինձ կը հարցնէք, թէ որտեղ է կապը:

—Ես ձեզ կը պատասխանեմ, որ գանգը կամ մեռեալի գլուխը ծովահէնների ընդհանուր նշանաբանն է: Բոլոր պատերազմներում, ուր նոցա վիճակվում է մասնակցել, նոքա դրօշակի տեղ գանգ են գործածում:

—Ես արդէն ասացի ձեզ, որ այն մագաղաթի կտոր էր, բայց ոչ թղթի: Մագաղաթը շատ դիմացկուն բան է, համարեաւ երբէք չը փչացող:

—Մագաղաթը շատ հազիւ են գործածում աննշան վկայագիրների համար, որովհետեւ առօրեայ գրութեան համար առաւել յարմար է հասարակ թուղթը: Այս խորհրդածութիւնը այն միտքը յղացրեց իմ մէջ, որ մեռեալ գլխի նրկարը պէտք է որ մի որեւէ բանի հետ կապ ունենար, պարունակէր իւր մէջ մի որ եւ է առանձին խորհուրդ: Ես ուշք դարձրի նոյնպէս նոյն իսկ մագաղաթի ձեւի վրայ: Չը նայելով որ մագաղաթի մի անկիւնը մի ինչ բանով որ փչացած էր, բայց դարձեալ հեշտ կարելի էր տեսնել, որ սկզբներում նա երկայնաձեւ էր եղած: Այդպիսով մագաղաթը պատրաստվում էր մի որ եւ է նշանաւոր վկայագրի համար, որ ուզում էին երկար ժամանակ անարատ պահել:

—Բայց, ընդհատեցի ես նորա խօսքը, —դուք ասում էք որ գանգ չը կար նկարած ձեր մագաղաթի վրայ, երբ դուք բզէզ էիք նկարում: Ինչպէս կարող էիք դուք մի որ եւ է յարաբերութիւն հաստատել նաւարկղի եւ գանգի մէջ, որ նկարուեցաւ հէնց ձեր խօսքերին նայելով, բայց ումնից եւ երբ, —այդ միայն Աստծուն է յայտնի. —նորանից յետոյ, երբ դուք նկարեցիք բզէզը:

—Այո, ահա հէնց դրանումն է կայանում նոյն իսկ գաղտնիքը, լաւ է, որ ինձ համար համեմատաբար առաւել դիւրին էր իմանալու այդ գաղտնիքը: Իմ բռնած ճանապարհը

ճիշտ էր, եւ այդ պատճառով կարող էր մի միայն մի եղբայր-կացութեան բերել: Ես այսպէս էի դատում. երբ ես նկարում էի իմ բղէղը, մագաղաթի վրայ գանգի ամենամիտքը հետք անգամ չը կար. երբ ես աւարտեցի նկարը, ես յանձնեցի ձեզ եւ բոլոր ժամանակ, մինչեւ դուք ձեռքիդ բռնած ունէիք, ես ձեզ աչքի առաջ ունէի: Հետեւաբար, դուք չէիք կարող նկարել գանգը, մի ուրիշը նոյնպէս չէր կարող այդ անել: Այդպիսով նա ստեղծուած չէր մարդկային ձեռքով, այն ինչ նա այնտեղ, իմ աչքիս առաջնէն էր:

— Հասնելով այդպիսի մտքի, ես սկսեցի յիշել ինձ եւ յիրաւի ինձ յաջողուեց յիշել այն բոլոր մարնաման հանգամանքները, որոնք տեղի ունեցան այն ժամանակ: Եղանակը ցուրտ էր, — ո՛հ, երջանիկ, հազուագիւտ դիպում, հնոցում բորբոքվում էր կրակը: Ես բաւականին տաքացայ աշխատանքից, եւ նստայ սեղանի մօտ, իսկ դուք նստել էիք համարեա՛, բոլորովին մօտեցնելով ձեր աթոռը հնոցին: Հէնց այն րոպէին, երբ ձեր ձեռքը դրեցի մագաղաթը եւ դուք սկսեցիք զննել նորան, Վօլֆը, իմ ջրասոյգ շունը ներս մտաւ եւ ընկաւ ձեր ուսերի վրայ: Դուք փայտայում էիք նորան ձախ ձեռքով, իսկ աջը, որով բռնած ունէիք մագաղաթը, դուք աշխատում էիք նորանից հեռացնել, անտարբեր վայր իջեցնելով ծնկների մէջ եւ նորան բոլորովին կրակի մօտ բռնելով: Ինձ մինչեւ անգամ թուում էր, որ բոցը հասնում էր մագաղաթին, եւ ես ուզում էի նախազգուշացնել ձեզ, որ դուք առաւել զգոյշ լինէիք: Բայց նախ քան թէ մի բառ կարող էի արտասանել, դուք հեռացրիք մագաղաթը կրակից եւ նորից սկսեցիք զննել: Երբ ես լաւ նկատեցի այս բոլոր հանգամանքները, ես համոզուեցայ, որ գանգի պատկերը, որը ես յետոյ նկատեցի, իւր ծագումով պարտական էր կրակի ներգործութեան: Դուք, հաւանական է, գիտէք, որ կան, — եւ միշտ էլ եղել են, — այնպիսի քիմիական բաղադրութիւններ, որոնցով կարելի է գրել

թղթի կամ նուրբ մագաղաթի վրայ, եւ գրուածը տեսանելի է դառնում միայն կրակի ներգործութեան ներքոյ: Երբեմն այս նպատակի համար գործ են ածում վայրի քրքում լուծուած արքայաջրի մէջ եւ բացուած չորս մասը ջրով. այս միաւորութիւնից ստացվում է կանանչ ներկ: Կօբալտի ընտիր քարը, լուծուած բորակի ցքու մէջ, տալիս է կարմիր ներկ: Այս ներկերն անհետանում են, երբ սառչում է այն նիւթը, որի վրայ գրել էին, բայց սոցա կարելի է նորից վերարտադրել, ենթարկելով կրակի ներգործութեան:

— Ես զննում էի այն ժամանակ գանգը ամենամեծ խնամքով: Կողքերի գծերը աւելի պարզ էին երեւում, քան թէ միւս մնացեալները: Ամներեւ էր, որ տաքութեան ներգործութիւնը կամ բաւականաչափ զօրեղ չէր, կամ անհասարկ էր տարածուել: Իսկոյն կրակ վառեցի եւ ենթարկեցի մագաղաթի իւրաքանչիւր կողմը վառ բոցի ներգործութեան: Սկզբում ինձ յաջողուեց տեսանելի դարձնել գանգի գունատ գծերը. բայց փորձը շարունակելուն պէս, ես նկատեցի մագաղաթի մի ծայրին, հակառակ այն կողմին, ուր նկարուած էր մեռեալ գլուխը, մի պատկեր, որ սկզբում համարեցի այծի նկար: Բայց ուշադրութեամբ դիտելուց յետոյ ես համոզուեցայ, որ պատկերը պէտք է ներկայացնում լինէր ուլիկ:

— Ա՛խ, ասացի ես. ի հարկէ, ես իրաւունք չունիմ ծիծաղելու ձեզ վրայ, — միլլիօն աւ կէս դօլլար. այդպիսի իրերով կատակ չեն անում: Բայց յուսով եմ, որ դուք չէք աւելացնիլ երրորդ օղակ ձեր շղթային. դուք չէք գտնիլ ո՛չ մի էական կապ ծովահէնների եւ այծի մէջ. ծովահէնները ինչպէս դուք լաւ գիտէք, շատ քիչ առընչութիւն ունին այծերի հետ: Այդ աւելի ազարակատէրերի գործն է:

— Բայց չէ՞ որ ձեզ ասացի, որ այդ այծի նկար չէր:

— Լաւ: Թող այդ լինէր ուլի նկար, — այդ գրեթէ մի եւ նոյն է:

—Գրեթէ, բայց ոչ բոլորովին, ասաց Լըգրանը: Դուք, ի հարկէ, լսած կը լինիք մի ինչ որ Նիդ Նաւապետի մասին: Ես իսկոյն սկսեցի նայել այս կենդանու պատկերի վրայ, իբրեւ մի որ եւ է ժամանակագրական կամ նշանագրական գաղտնի նշանագրերի վրայ (kid նշանակում է այծ): Ես այս կարծիքն եմ յայտնում նորա համար, որ այնտեղը, որը բռնած ունէր այս նկարը, բնականաբար ծնեցնում էր այդպիսի միտք: Ի՞նչ կը վերաբերի մեռելի գլխին, որ նկարուած էր հակառակ կողմը, նա պէտք է լինէր դրօշմ կամ կնիք: Բայց ես շատ յուզուած էի մնացեալի բացակայութեամբ, —ինձ անյայտ էր նոյն իսկ իմ երեւակայած վկայագրի հիմունքը, — նոյն իսկ բնագիրը:

—Ես կարծում եմ, որ դուք յոյս ունէիք բառեր գտնելու պատկերի եւ դրօշմի մէջ տեղը:

—Այո, մի այդպիսի բան: Բանն այն է, որ ես բոլորովին տողորուած էի անխուսափելի, մեծ բաղտաւորութեան նախազգացմամբ: Ինչո՞ւ:—Ես ինքս չեմ կարող ասել այդ: Ուղիղն ասած, այս աւելի հասարակ ցանկութիւն էր, քան իսկական հաւատ. բայց կը հուստումը դուք ինձ, եթէ ձեզ ասեմ, որ Իւլիտէրի անմիտ խօսքերը, թէ բղէղը ամբողջապէս ոսկուցն էր, զարմանալի կերպով աղդեցին երեւակայութեանս վրայ: Եւ ընդ նմին իբրեւ տարօրինակ էին մի ամբողջ շարք յաջող հանգամանքներն ու արկածները:—Նկատեցիք արդեօք, թէ այս բոլորի մէջ իբրեւ դիպուածական պատահարներ կային: Կարծես թէ անհրաժեշտ կարեւոր լինէր, որ այս բոլոր անցքերը տարուայ այնպիսի օրը պատահէին, որ լինէր կամ կարողանար լինիլ բաւականին ցուրտ, որ հարկաւոր լինէր կրակ վառել: Իսկ առանց այն կրակի եւ առանց շան միջամտութեան այն բոպէին, հէնց երբ իսկապէս հարկաւոր էր, ես երբէք չէի կարող իմանալ այս մեռեալի գլխի գոյութիւնը եւ երբէք չէի տիրանալ այս գանձին:

—Նարունակեցէք, յետոյ, յետոյ, ես անհամբեր լսում եմ:

—Ի հարկէ, դուք անշուշտ լսած կը լինիք շատ պատմութիւններ, շատ անմիտ փրօն առասպելներ այն գանձերի մասին, որոնք իբր թէ թագերել են Ատլանտեան ովկիանոսի զանազան ափերում Նիդը եւ նորա ընկերները: Ընդհանրապէս այս բոլոր լուրերը մի որեւէ հիմք պէտք է ունենան: Եւ եթէ այդ լուրերը այդպէս երկար ժամանակ եւ այդպիսի յամուրթեամբ պահպանվում էին, սորա պատճառն, իմ կարծիքով, այն էր, որ թագուցած գանձերը մնում էին դեռ թագուցած: Եթէ որ Նիդը իւր աւարը թագցնէր յայտնի ժամանակում եւ յետոյ նորից յետ վերցնէր այն, կասկած չը կայ որ այդ լուրերը չէին հասնիլ մեզ իրանց ներկայ անսփոփոխ ձեւով: Ի նկատի առէք այն հանգամանքը, որ այս բոլոր պատմութիւնները խօսում են մի միայն այն մարդոց մասին, որոնք որոնում են այդ գանձերը եւ երբէք չեն խօսում նոցա մասին, որոնք նոցա գտնում են: Եթէ որ ծովահէնը յետ վերցնէր իւր փողերը, սորանով ամեն բան կը վերջանար: Ինձ թւում է, թէ մի որեւէ պատահար, օրինակի համար վկայագրի կորուստը, որ պէտք է ցոյց տար տեղը, զրկեց նորան նորից որոնելու այս գանձը. ես կասկածում եմ որ նորա ընկերները իմացել են այս արկածի մասին, այլապէս, հաւանական է, որ նոքա երբէք չէին կարող իմանալ թագուցած գանձի մասին, եւ որ նոքա անյաջողութեամբ պտրտելուց յետոյ, առանց ղեկավարի եւ առանց գրական ապացոյցների, ամեն տեղ լուր են տարածել թագուցած գանձի մասին: Ահա թէ իրտեղից են ծագել այդ բոլոր առասպելները: Պատահել է ձեզ արդեօք լսել այս եղբրքին երբ եւ իցէ մի որ եւ է գանձ գտնելու մասին:

—Երբէք:

—Բայց կարծեմ պարզ բան է, որ Նիդը պէտք է ունենար ահագին հարստութիւն: Ես բոլորովին հաւատացած էի,

որ նոքա դեռ պահպանուել են երկրի մէջ. եւ դուք շատ չէք զարմանալ, եթէ ես ձեզ ասեմ, որ ես յոյս էի տածում, մի յոյս, որ գրեթէ հաւանականութեանն էր հասնում, որ այդպիսի տարօրինակ հանգամանքներում գտնուած մագաղաթը պարունակում էր այն տեղի անհետացած ապացոյցը, ուր որ գրուած էր գանձը:

— Բայց դուք ինչպէս հասաք այդ բանին:

— Ես մի անգամ էլ բռնեցի մագաղաթը առաւել զօրեղ կրակի առաջ, բայց ոչինչ չէր երեւում: Ես մտածեցի, որ սուրա պատճառն այն ցեխի շերթն էր, որ ծածկում էր մագաղաթը. այն ժամանակ ես լաւ մաքրեցի մագաղաթը տաք ջրով: Յետոյ ես դրի սպիտակ երկաթից շինած կաթսայում գանգի նկարը վերեւ բռնելով, իսկ կաթսան դրի կասկարայի վրայ եւ կրակ վառեցի: Մի քանի րոպէից յետոյ կաթսան բոլորովին տաքացաւ. ես հանեցի մագաղաթի կտորը եւ անպատմելի ուրախութեամբ նկատեցի, որ նա մի քանի տեղերում ծածկուած էր նշաններով, որոնք նմանում էին միմեանց մօտ շարքով գրած թուանշաններին: Ես դարձեալ դրեցի մագաղաթը կաթսայում, մի րոպէ պահեցի նորա մէջ, եւ երբ այնտեղից դուրս հանեցի, նա ստացաւ հետեւեալ տեսքը:

Այս ասելուն պէս Լըգրանը նորից տաքացնելով մագաղաթը, տուեց ինձ զննելու: Երեւեցան հետեւեալ կարմրագոյն նշանները. նոքա բիրտ կերպով նկարուած էին գանգի եւ ուրիշի մէջ տեղը:

$$53_{++}^{++} + 305_{++}^{++}) 6^* : 4826) 4_{++}^{++} : 4_{++}^{++} : 806^* : 48 + 8 \text{ — } 160))$$

$$85; 1_{++}^{++} ((; :^* 8 + 83(88) 5^* + : 46 (; 88^* 96^* ? : 8)^* : (; 485) ;$$

$$5^* + 2 :^* : (; 4956^* 2(5^* - 4) 8 \text{ — } 18^* : 4069285) ; (6 + 8)$$

$$4_{++}^{++} : 1 ((; 9 : 48081 : 8 : 8_{++}^{++} 1 ; 48 + 85 : 4) 485 + 528806^*$$

$$81 (; 9 : 48 : (88 : 4 (; ? 34 : 48) 4_{++}^{++} : 161 , : 188 : ; ? ;$$

— Բայց, ասացի ես, տալով նորան փաթեթը. դորանով ինձ համար դեռ ոչինչ չը պարզուեց: Եթէ այդ հանելուկը լուծելու համար խոստանային տալ ինձ բոլոր Գօլկոնդեան գանձերը (Հնդկաստանում), ես այն ժամանակն էլ հաւատացած կը լինէի, որ ես երբէք այն չէի լուծիլ:

— Եւ սակայն, ասաց Լըգրանը, — նորա լուծումն իհարկէ այնքան դժուար չէ, որքան այդ կարող էր երեւալ առաջին անգամից: Այս նշանները, ինչպէս որ իւրաքանչիւրը դիւրաւ կարող է հասկանալ, կազմում են որոշ գաղտնագրեր, այսինքն նոքա խորհրդաւոր գրուած են: Բայց այն բոլորից յետոյ, ինչ որ մենք գիտենք Կիդի մասին, ես չէի կարող ենթադրել, որ նա ընդունակ լինէր ստեղծել իւր համար մի առանձին գաղտնագրութիւն, որ անհասկանալի լինէր ուրիշների համար: Ես կարծում էի, որ այս շատ սովորական գաղտնագրերի օրինակն էր. սակայն այնպիսի օրինակ, որը ծովագնացի բիրտ կարծիքով, պէտք է որ առանց բանալիի բոլորովին անհասկանալի երեւար:

— Եւ դուք ի հարկէ, լուծեցիք այդ:

— Նաո հեշտ. ինձ պատահել է կարգաւ նորանից տասն հազար անգամ դժուար գաղտնագրեր: Հանգամանքները եւ խելքիս յայտնի հակումն տրամադրեցին ինձ դոյնպիսի հանելուկներ լուծելուն, եւ շատ կասկածելի է, որ մարդկային հնարագիտութիւնը կարողանար ստեղծել մի այնպիսի հանելուկ, որը չը կարողանար լուծել մի ուրիշ մարդկային հնարագիտութիւն, բաւական աշխատանք գործ դնելով նորա վրայ: Այդպիսով, երբ մի անգամ ինձ յաջողուեց մի կարգ նշաններ սահմանել, որոնց կարելի կը լինէր կարգաւ, ես համարեալ թէ դադարեցի մտածելու նոցա իմաստը հասկանալու դժուարութեան մասին:

— Այս, եւ առ հասարակ, այսպիսի դիպումներում գլխաւոր դժուարութիւնն այն է, որ մարդս գիտենար գաղտ-

նագրերի լեզուն, որովհետեւ դոցա ընթերցումը, մանաւանդ եթէ մենք աւելի հասարակների հետ ունինք գործ, կախուած է լեզուի ոգուց եւ կարող է կերպարանափոխուիլ: Առ հասարակ, այսպիսի դիպուածներում ամենից լաւ է փորձել յաջորդաբար ձեզ յայտնի բոլոր լեզուները, մի առ ժամանակ ղեկավարուելով հաւանականութեամբ, մինչեւ որ չէք գտնիլ նմանը: Բայց մեր ձեռքն եղած գաղտնագրերի բոլոր դժուարութիւնը այս դիպուածում լուծուեցաւ նկարով: Նիդ խօսքով ԵԲՈՒՍ կարելի է կազմել միայն անգլիական լեզուով: Ես մի քանի անգամ փորձեցի շատ լեզուներ, բայց բոլորն ի դուրս գործ էի դնում իսպանականը, ֆրանսիականը... կարծելով որ ծովահէնը աւելի շուտ այս լեզուներով կը գրէր իւր մեծ գաղտնիքը, բայց կանգ առայ անգլիականի վրայ:

— Դուք նկատում էք, որ այնտեղ բառերի մէջ դատարկ միջանցքներ չը կան: Եթէ որ միջանցքներ լինէին, խնդիրն ի հարկէ, աւելի պարզ կը լինէր: Այդ դիպուածում ես միայն համեմատութիւններ կանէի եւ կրնորէի աւելի կարճ խօսքեր, եւ եթէ ինձ յաջողուէր գտնել մի խօսք, որը միայն մի տառից կազմուած լինէր, օրինակ J *) ես գրեթէ հաւատացած կը լինէի որ խնդիրը կը լուծեմ: Բայց որովհետեւ այնտեղ միջանցքներ չկար, ես ամենից առաջ արտագրեցի, թէ որ նշանները աւելի յաճախ էին պատահում, եւ որոնք — սակաւ, եւ կարգաւորեցի նոցա նուազող կարգով: Ես բոլորը համարեցի եւ կազմեցի հետեւեալ աղիւսակը:

Նշանս 8 գտնուում է 33 անգամ

»	;	»	26	»
»	4	»	19	»
»	† եւ)	»	16	»

*) J — կարգացվում է ա յ և նշանակում է «ես»:

»	*	»	13	»
»	5	»	12	»
»	6	»	11	»
»	+ եւ 1	»	8	»
»	0	»	6	»
»	9 եւ 2	»	5	»
»	: եւ 3	»	4	»
»	?	»	3	»
»	1	»	2	»
»	— եւ .	»	7	»

— Բայց, չէ՞ որ անգլիերէնում Թ տառը միւսներից յաճախ է պատահում: Մնացեալ տառերը հետեւում են այս կարգով՝ a, o, i, d, h, n, r, s, t, u, y, c, f, g, l, m, w, b, k, p, q, x, z: Ե տառն ամեն տեղ գերիշխում է, եւ ընդ նմին այն աստիճան, որ հազիւ կարելի է հանդիպել մինչեւ անգամ մի փոքրիկ նախագասութեան, ուր որ Թ-ն չը լինէր գլխաւոր նշանը:

— Այսպիսով, հէնց սկզբում մենք ունինք աւելի հիմնական հող մեր գործողութեանց համար, քան թէ հասարակ կարծիքը: Սոյն աղիւսակի ընդհանուր գործադրութիւնը ակներեւ է, բայց մենք նորանով շատ քիչ կօգտուինք: Որովհետեւ մեզ մօտ գերիշխող նշանը Ծ-ն է, այդ պատճառով էլ մենք կընդունենք այդ նշանը սովորական այբուբենի Թ տառի տեղ: Որպէս զի արդարացնէինք մեր ենթադրութիւնը, տեսնենք թէ նշանս 8 յաճախ է կրկնուած պատահում թէ ոչ, որովհետեւ անգլիական լեզում Թ յաճախ կրկնվում է: Այդպէս էլ այս դիպուածում տեսնում ենք, որ այս նշանը կրկնուած 5 անգամից պակաս չէ գործ գրուած, թէ եւ գաղտնագրութիւնը շատ էլ մեծ չէ *):

— Այսպիսով 8 կը ներկայացնի տառս Թ:

*) Այսպէս օրինակ, հետեւեալ բառերի մէջ՝ meet, fleet, speed, seen, deen, agree և այլն:

t..eeth

t. ee

— Փոխադրելով յայտնի նշանները եւ անյայտները կէտե-
րով փոխարինելով, գտնում ենք՝

th rtee.

մի կարգ, որ ակամայ գլխի է գցում thirteen (տասներեք) բառի
վրայ, որ տալիս է մեզ երկու նոր տառ i եւ n, որոնք պատ-
կերացած էին 6 եւ *.

— Դառնանք այժմ գաղտնագրութեան սկզբին եւ մենք
կը գտնենք միաւորութիւնս.

53††+

— Փոխադրելով սոցա, ինչպէս մենք այս առաջ անում
էինք, ստանում ենք՝

. good

— Այս ցոյց է տալիս մեզ որ առաջին տառը կը լինի a
եւ որ այս երկու խօսքերս են a good (լաւ):

— Այժմ, որպէս զի խոստովենք շփոթուելուց, հարկա-
կաւոր կը լինէր դասաւորել մեր բոլոր գիւտերը աղիւսակի
ձեւով: Առ այժմն այս կը լինի մեզ համար սկզբնական բանալի.

5 ներկայացնում է a

+ » d

8 » e

3 » g

4 » h

6 » i

* » n

† » o

(» r

; » t

— Այսպիսով մենք ունինք տասը ամենից կարեւոր տառ
եւ այլ եւս կարիք չը կայ մեր լուծումն շարունակել իւր բո-
լոր մանրամասնութեամբ: Ես ձեզ բաւականաչափ ապացոյց-

ներ բերեցի, որ դուք համոզուէիք, որ դոյն տեսակ նշանա-
գրերը հեշտ լուծելի են, եւ որ դուք կարողանայիք նկատել այն
խոհեմ ճանապարհը, որով հարկաւոր է գնալ, որպէս զի կա-
րելի լինէր նոցա լուծել: Բայց իմացէք որ մեր աչքի առաջ
գտնող օրինակը պատկանում է գաղտնագրութեանց ամենա-
գիւրին դասակարգին: Եւ մնում է միայն տալ ձեզ վկայագրի
լիակատար թարգմանութիւնը, իբրեւ թէ մենք արդէն աս-
տիճանաբար լուծել ենք մեր նշանագրերի բոլոր նշանները:

— Ահա նա.

« Լաւ ապակին եպիսկոպոսի հիւրանոցում սատանի աթո-
ռի վրայ քառասուն եւ մէկ աստիճան եւ տասներեք բոլոր
հիւսիս արեւելք քառորդ հիւսիսի գլխաւոր ճիւղը եօթերորդ
ոտոր արեւելեան կողմը ձգեցէք գտնել ձախ աչքի միջից մե-
ղուի գիծը ծառից գնդակով յիսուն ֆուտ լայնութեամբ » *):

— Բայց, ասացի ես, հանելովն ինձ համար նոյնքան ան-
հասկանալի է մնում, որքան եւ առաջ, Խնչ միտք կայ այս
բոլոր շաղակրատութեան մէջ, այս ս ա տ ա ն ի ա թ ո ո լ ի
գ ա ն գ ի եւ ե պ ի ս կ ո պ ո ս ի հ իւր ա ն ո յ ի:

— Ես համաձայն եմ, պատասխանեց Լըգրանը, — որ ա-
ռաջին անգամից դժուար է մի բառ հասկանալ սորանից: Ես
նախ եւ առաջ աշխատեցի որոնել այս նախադասութեան մէջ
այն բնական ստորաբաժանումները, որոնք անշուշտ պէտք է
լինէին սոյն տողերը գրողի մտքի մէջ:

— Դուք երեւի ուզում էիք կէտագրութեան նշաններ
դնել, որքան կարողացայ ձեզ հասկանալ,

— Այո՛, դորա նման մի բան:

*) A good glass in the bishop's hostel in the devil's seat
forty-one degrees and thirteen minutes northeast and by north
main branch seventh limb east side shoot from the left eye of
the death's — head a bee line from the tree through the shot fifty
feet out.

— Բայց ի՞նչպէս կարող էիք դուք այդ անել:

— Ես մտածեցի, որ այս վկայագրի հեղինակը չէր բաժանել այս խօսքերը ոչ մի նշանով այն նպատակով, որպէս ղի աւելի եւս մթնաղնէր նոցա միտքը: Բայց մի առանձին նուրբ խելք չունեցող մարդը այդ տեսակ գործերում միշտ ծայրայեղութեանն է համուս: Երբ նա գրում էր իւր մտքերը սոյն վկայագրի վրայ, բոլոր տեղերում, ուր իմաստը պահանջում է կանգ առնել կամ կէտ դնել, նա միշտ աշխատել է, որ թագնէր այդ, մտնեցնելով տառերը սովորականից մօտ: Լաւ գիտեցէք այս ձեռագիրը, դուք գիւրութեամբ կարող էք զանազանել հինգ այնպիսի տեղ, որտեղ տառերն, այդպէս ասել, կուտակում են միմեանց վրայ: Ղեկավարելով այս գիտողութեամբ, ես եւս կազմեցի հետեւեալ ստորաբաժանումը:

«Լաւ տպակիւն եպիսկոպոսի հիւրանոցում սատանի աթոռի վրայ — քառասուն եւ մէկ աստիճան եւ տասներեք բոպէ — հիւսիս արեւելք քառորդ — հիւսիս — գլխաւոր ճիւղը եօթերորդ ուսը արեւելեան կողմը անց կացրէք գանգի ձախ աջքի միջից — մեղուի գիծ ծառից գնդակով յիսուն ֆուտ լայնութեամբ»:

— Զը նայելով ձեր ստորաբաժանումներին, ասացի ես, ես դեռ էլի ոչինչ չեմ հասկանում:

— Ես ինքս մի քանի օր շարունակ դորանից առաջ չէի գնում, պատասխանեց Լըգրանը: — Այդ միջոցին ես ամեն ճիշդ թափում էի որոնելու Սիւլիւան կղզու շրջակայքում մի շինութիւն, որ անուանուէր Եպիսկոպոսի հիւրանոց, որովհետեւ ինձ ամենեւին չէր վրդովում Hostel (օտել — հիւրանոց) բառի հնազանդ ուղղագրութիւնը: Որովհետեւ իմ ջանքերը ոչինչ հետեւանք չունեցան, ես որոշեցի արդէն ընդլայնել իմ գործողութեանց շրջանը եւ սկսել աւելի սիստեմատիքաբար գործել, բայց յանկարծ եւ յիշեցի, որ անունս Bishop's hostel (Եպիսկոպոսի հիւրանոց) կարող էր մի որ

եւ է յարաբերութիւն ունենալ հին Bessop ընտանիքի հետ, որ շատ վաղ ժամանակներից կալուածներ ունէր կղզուց չորս մղոն հեռաւորութեամբ դէպի հիւսիս: Այն ժամանակ ես գնացի այս գիւղը եւ հարց ու փորձ արի այնտեղ ամենածեր նէգրներին: Վերջապէս մի պառաւ ասաց ինձ, որ նա լսել է Lessop ամրոցի անունը եւ որ ինքը կարող է ինձ այնտեղ տանել, բայց որ այժմ այնտեղ ոչ ամրոց կայ, ոչ հիւրանոց, բայց կայ մի միայն մեծ ժայռ: Ես առաջարկեցի նորան լաւ վարձ նորա ծառայութեան համար եւ մի փոքր տատանուելուց յետոյ նա որոշեց տանել ինձ մինչեւ նշանակեալ տեղը: Մենք գտանք այն տեղը առանց մեծ դժուարութեան. ես արձակեցի նորան եւ սկսեցի հետազօտել տեղի դրութիւնը: Ամրոցը ներկայացնում էր ժայռերի եւ բեկորների անկարգ կուտակումն, որոնցից մանաւանդ աջքի էր ընկնում իւր բարձրութեամբ, մեկուսացած դրութեամբ եւ ձեւերի գեղեցիկութեամբ մի ժայռ: Ես բարձրացայ նորա գագաթը, եւ այստեղ ինձ զգացի սաստիկ անեղանելի դրութեան մէջ, որովհետեւ կատարելապէս չը գիտէի, թէ ի՞նչ անեմ այնուհետեւ:

— Մինչդեռ ես այդպէս էի մտածում, աջքի ընկաւ ժայռի արեւելեան կողմը մի նեղ դուրս ցցուած փոքրիկ ժայռիկ, մօտ մի եւ արդ ցածր այն տեղից, որտեղ ես գտնվում էի: Այս դուրս ցցուած ժայռը մօտ տասնեւութ գիւլիմ երկայնութիւն ունէր եւ մի ֆուտից ոչ աւելի լայնութիւն: Այն խոր տեղը, որ փորուած էր ժայռի վրայ ճիշտ այս դուրս ցցուած ժայռիկի վրայով, մեծ նմանութիւն էր տալիս նորան այն մէջքը ծուռ աթոռներին, որպիսիք գործ էին ածում մեր նախնիքը: Ես չէի կասկածում, որ այս հէնց այն սատանի աթոռն էր, որի մասին յիշվում էր վկայագրի մէջ եւ ինձ թւում էր, որ ձեռքումս արդէն գտնվում էր գաղտնիքի բանալին: —

— Լաւ ապակի, ես գիտէի որ այս խօսքով թէեւ ու-

զում էին նշանակել հեռագրատակը, որովհետեւ մեր ծովագնացները հազիւ են գործ ածում glass, ապակի բառը ուրիշ մտքով: Ես իսկոյնեւեթ հասկացայ, որ պէտք է ղինուիլ հեռագրատակով, տեղաւորուելով որոշ տեղ եւ չը թոյլ տալ ով ոչ մի փոփոխութիւն: Այդպիսով նախադասութիւններս՝ քառասուն եւ մէկ աստիճան, եւ տասներեք բուլէ, եւ հիւսիս արեւելք քառորդ հիւսիսի,—ինչպէս իսկոյնեւեթ գլխի ընկայ,—պէտք է ցոյց տային հեռագրատակի ուղղութիւնը: Սաստիկ յուզուած այս բոլոր գիւտերով, ես վազեցի տուն, առայ հեռագրատակս եւ վերադարձայ ժայռը:

—Ես սողացի ժայռի ծայրը եւ նկատեցի որ այստեղ կարելի էր նստել մի միայն մի դրութեամբ: Այս փաստը վերահաստատեց իմ եղբակացութիւնը: Այն ժամանակ ես ղինուեցայ հեռագրատակով: Հասկանալի է, որ բառերս քառասուն եւ մէկ աստիճան եւ տասներեք բուլէ կարող էին միայն նշանակել բարձրութիւն հորիզոնից վեր, որովհետեւ հորիզոնական ուղղութիւնը պարզ նշանակուած էր բառերովս հիւսիս—արեւելք քառորդ հիւսիսի: Ես սահմանեցի այդ ուղղութիւնը գրպանիս կողմնացոյցի օգնութեամբ. յետոյ բռնելով հեռագրատակը կազմեցի մի անկիւն մօտ քառասուն եւ մէկ աստիճան. ես սկսեցի զգուշութեամբ վար ու վեր տանել, մինչեւ որ իմ ուշագրութիւնս չը գրաւուեցաւ մի ինչ որ կը որ անցքով, մի ինչ որ լողութեան պատահանի նման մի բանով մի ծառի տերեւներում, որ աչքի էր ընկնում իւր մեծութեամբ: Այս անցքի կեդրոնում ես նկատեցի մի ինչ որ սպիտակ կէտ, բայց ես սկզբում բոլորովին չը կարողացայ իմանալ, թէ այդ ինչ էր: Հեռագրատակս լաւ ամրացնելով, ես սկսեցի նորից նայել եւ ի վերջոյ տեսայ, որ դա մարդկային գանգ էր:

—Այդ գիւտից յետոյ, որ ինձ շատ քաջալերեց, ես համարում էի գաղտնիքը բացուած. որովհետեւ բառերս՝ գըլ-

լաւոր ձիւղը, եօթերորդ ոստը, արեւելեան կողմը կարող էին վերաբերուիլ միայն ծառի վրայ կաած գանգի դրութեանը. իսկ այս խօսքը՝ ձգեցէք գանգի ձախ աչքից, ոչ մի ուրիշ բացատրութիւն չէր թոյլ տալիս, եթէ խօսքը վերաբերում էր թագուցած գանձին: Ես իսկոյն հասկացայ, որ պէտք է գնդակ ձգել գանգի ձախ աչքից եւ որ մեղուի գիծը, ուրիշ կերպ ասելով, ուղիղ գիծը, որ դուրս գար ոստի ամենամօտ կէտից եւ անցկացրած գընդակի միջով, այսինքն այն կէտի միջից, որտեղ ընկաւ գնդակը, ցոյց կը տար այն տեղը, ուր իմ կարծիքով անպատճառ պէտք է թագուցած լինէր գանձը:

—Այս բոլորը շատ պարզ է, ասացի ես.—եւ ընդ նմին շատ սրամիտ, շատ հասարակ եւ հասկանալի: Բայց ինչ արիք դուք եպիսկոպոսի հիւրանոցից դուրս գալուց յետոյ:

—Լաւ նկատելով այս ծառը, նորա ձեւը եւ դրութիւնը, ես վերադարձայ տուն: Հազիւ իջայ ես սատանի աթոռից թէ չէ, իսկոյն կը որ անցքը անհետացաւ, եւ որքան էլ չը նայեցի բոլոր կողմերը, ես ոչինչ չը տեսայ:

Ամենագերազանց սրամտութիւն երեւաց ինձ այն փաստը, (նորա գոյութեան մէջ համոզուեցայ, կրկնելով փորձը), որ այս կէտ անցքը տեսնվում էր միայն մի տեղից եւ այդ տեղն էր ժայռի ձեղունը:

—Այս ճանապարհորդութեանս ժամանակ դէպի եպիսկոպոսի հիւրանոցը ուղեկցում էր ինձ Իւպիտէրը, որ անկասկած ուշք էր դարձրել իմ մտաւոր տեսքի վրայ եւ ամեն ուժով աշխատում էր ինձ մենակ չը թողնելու: Բայց միւս օրը ես վեր կացայ շատ վաղ. ինձ յարողեց կամացուկ դուրս պրճնել նորանից եւ ես վազեցի լեռները իմ ծառը որոնելու: Մեծ դժուարութեամբ ես ի վերջոյ գտայ այն: Երբ ես գիշերով վերադարձայ տուն, իմ ծառաս պատ-

բաստ էր ինձ ծեծելու: Բոլոր մնացեալը կարծեմ դուք այնպէս լաւ գիտէք, ինչպէս եւ ես:

— Ես կարծում եմ, ասացի ես, — որ առաջին անգամ գանձը որոնելու ժամանակ դուք չը կարողացաք գտնել այդ տեղը միայն Եւալիտէրի յիմարութեան պատճառաւ, որ ձգեց բզէզը գանգի աջ աչքից, փոխանակ ձախի:

— Հէնց այդպէս, շնորհիւ այդ սխալի, մենք հեռանում էինք գնդակից, այսինքն այն տեղից, ուր ցցուած էր մեկը, երկու եւ կէս դիւլիմ, եթէ որ գանձը լինէր հէնց այն տեղի տակ, ուր ընկած էր գնդակը, այնուհետեւ ի հարկէ, սխալն այնքան նշանաւոր չէր լինիլ, բայց գնդակը եւ ծառի ամենամօտ կէտը միայն երկու կէտեր էին, որոնք պիտի ծառայէին գծի ուղղութիւնը ցոյց տալու համար: Շատ հասկանալի է, որ այդ զանազանութիւնը, որ սկզբում այդքան աննշան էր, հետզհետէ մեծանում էր գծի մեծանալով եւ երբ մենք յիսուն ֆուտ տարածութեան վրայ էինք կանգնած, նորա շնորհիւ, մենք բոլորովին շեղուեցանք ճանապարհից: Եթէ ես այսպէս սաստիկ հաւատացած չը լինէի թագուցած գանձի գոյութեան մէջ, շատ կարելի է, մենք ի զուրկը կորցնէինք մեր աշխատանքը:

— Բայց ձեր խրոխտ եւ վերջին դէմքը երբ ձգում էիք բզէզը: — Ի՞նչ տարօրինակ արարք: Ես ձեզ բոլորովին խելագար էի կարծում: Եւ ինչո՞ւ հարկաւորուեց ձեզ ձգելու գանգի միջից ձեր միջատը, եւ ո՞չ թէ գնդակը:

— Աստուած վկայ, ճշմարիտը խոստովանած, ինձ սաստիկ չէին դուր գալիս ձեր կասկածները ուղեղիս դրութեան վերաբերութեամբ, եւ որպէս զի վրէժս առնեմ ձեզնից, ես որոշեցի մի փոքր յիմարացնել ձեզ: Ահա թէ ի՞նչո՞ւ ես տարուբերում էի բզէզը եւ անպատճառ ցանկանում էի ձգել նորան ծառի գագաթից: Զեր նկատողութիւնը նորա անսովոր կշռի մասին ծնեցրին իմ մէջ այս վերջին միտքը:

— Այո, ես այդ հասկանում եմ, բայց այժմ դժուարացնում է ինձ մի բան. ի՞նչ կարելի է ասել հորում գտնուած կմախքների մասին:

— Ա՛խ, այդ հարցի վերաբերեալ ինքս էլ ոչինչ չեմ կարող ասել: Ես միայն հնարաւոր եմ տեսնում մի ճշմարտանման բացատրութիւն, բայց իմ ծայրայեղ ենթադրութեամբս պէտք է թոյլ տալ մի սարսափելի բան, որին անասելի ծանր է հաւատալ:

— Աներկբայ է, սր Կիզը, — եթէ միայն այդ գանձը Կիզի թաղածն է, որոյ մասին անձամբ ամենեւին չեմ տարակուսում, անպատճառ պիտի ունենար օգնականներ, երբ նա թագուցանում էր գանձը: Աշխատանքը վերջացնելուց յետոյ Կիզը շատ կարելի է աւելի խոհեմութիւն համարեց չունենալ իւր գաղտնիքի վկաներ: Շատ կարելի է բաւական էր քլունգի երկու հարուած, որ նորա օգնականների կեանքին վերջ տար, որոնք դեռ էլի աշխատում էին փոսի մէջ, իսկ շատ կարելի է հարկաւորուեցան եւ բոլոր տասներկու հարուածները:

— Բայց ո՞վ կարող է այդ հաստատ ասել:



ՅԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴԱՑ

ԱԶԳ — ԱՆՈՒՆՆԵՐԸ.

Սրբազան պարտականութիւն էմ համարում
հրապարակական խորին շնորհակալութիւնս
յայտնելու ազնիւ բարեկամացս՝—Գեր. Գեորգ Եպիս-
կոպոս Սուրենեանին, Արժանապատիւ Հարց Ժ Յովնանեան ա. ք. Սարգ-
սեանին, Օգսենտիոս ա. ք. Կոպակեանին, Բարդուղիմէոս ա. ք. Բեկզիս-
յեանին, Վահան քահանայ Տէր-Յովնաննիսեանին, Մեծ. տիկին Թամար
Կանկանեանին, Մեծ. օր. Նատալիա Սկանդարեանին, Մեծ. օր. Գայի-
անն Տէր-Խաչատրեանին եւ Մեծ. պ. պ. Նիկողայոս Խոսրովեանին,
Յովնանջան Մուրաֆեանին, Ժ Աւետիս Գուլակեանին, Արշակ Սպա-
րապետեանին, Կարապետ Դաւթեանին, Սիմեօն Մատինեանին, Զա-
քարիա Աբելեանին, Պետրոս Իսախանեանին, Յովնաննեան Տէր-Գրիգո-
րեանին, Սարգիս Աւագեանին, Յոնան Դաւթեանին,—ո բ ո ճ ք ջ ջ
զլացան ըստ չափու կարողութեան օգնելու ինձ իմ
բարգմանած հետեւեալ ընթերցողներին հրատարա-
կութեան—I. «Անդամալոյժ» մանկ. վեպ. հեղ. Անդերսէնի,
II. «Կնոջ կոչումը եւ դաստիարակութիւնը», հեղ. Լուի-
զա Բիւսնէրի: III. «Փայլուն կոպեկ» մանկ. վեպ. հեղ.
Բառնէնի IV. «Ոսկի բզեզ. հեղ. Էդգար Պո:

Գ. Շ.

Թ Ի Ֆ Լ Ի Զ

Օրինակ

Օր. Թեղի Գասպարեան	1
Օր. Հերիքնազ Արաբեգեան	>
Օր. Վառվառա Դուլիջանեան	>
Օր. Աննա Գամոյեան	>
Օր. Նունէ, Սողայեան	>
Օր. Աննա Խարագեան	>
Օր. Նատալիա Յովնաննիսեան	>
Օր. Նատալիա Շահբուղաթեան	>
Օր. Նատալիա Տէր-Մկրտչեան	>
Օր. Կատարինէ Սուգանաճեան	>
Օր. Շուշանիկ Սահարունի	>
Օր. Մ. Ալադարեան	>
Օր. Սրբուհի Ումիկեան	>
Տիկին Մարիամ Խարագեան	>
Օր. Գայիաննէ Արշակունի	>
Օր. Սրբուհի Վարդանեան	>
Տիկին Նունէ Խոսրովեան	>
Տիկին Աննա Արեշեան	>
Օր. Եւգենիա Տէր-Աբրահամեան	>
Պ. Ժ Աւետիս Գուլակեանց	>
Պ. Ադէքսանդր Տէր-Ստեփաննոսեանց	>
Պ. Կարապետ Աղաջանեանց	>
Պ. Արտաշէս Մուրադեանց	>
Պ. Գրիգոր Մուրադեանց	>
Տիկին Մայի Բերդեանց	>
Պ. Աւետիս Վաչեանց	>
Օր. Նունէ Շահբուղաթեան	>
Օր. Նատալիա Սկանդարեանց	>

	Օր.
† Արժ. Յովհաննէս առաջ քահանայ Սարգսեանց	5
Պ. Վարդան Սուրբանեանց	3
Պ. Գրիգոր Տէր-Յարութիւնեանց	3
Պ. Նիկողայոս Խոսրովեանց	2
Պ. Արշակ Սպարապետեանց	1
Արժ. Գիւտ քահանայ Աղանեանց	»
Արժ. Ղեւոնդ Էրեց Խարազեանց	»
Պ. Միքայիլ Սալամբեգեանց	»
Պ. Աղեքսանդր Քիչմիշեանց	»
Ս. Գալիանեան Օր. Դպրոց	»
Պ. Ամիրան Մանդինեանց	»
† Արժ. Թադէոս առաջ քահանայ Խօջայէնաբեանց	»
Պ. Արշակ Դեմուրեանց	»
Պ. Յովհաննէս Առիւծեանց	»
Արժ. Ստեփանոս քահանայ Սամուէրեանց	»
Յ. Տէր-Աբրահամեանց	»
Պ. Մեհրաբ Մեհրաբեանց	»
Պ. Սիմէօն Մատինեանց	»
Պ. Նիկողայոս Միսկինեանց	»
Պ. Միքայիլ Ռափայիլեանց	»
Պ. Աւետիս Գիւլմսիրեանց	»
Պ. Հասրաբ Զանազիգեանց	»
Պ. Անդրեաս Տէր-Գեորգեանց	»
Պ. Շմաւոն Դասպարեանց	»

ՎԱԴԱՐՇԱՊԱՏ.

Պ. Զաքարիա Աբէյեանց	»
Պ. Վահան Օհանջանեանց	»
Պ. Աբրահամ Նաւասարդեանց	»
Պ. Սմբատ Մարտիրոսեան Տէր-Պետրոսեանց	»
Խաչատուր աղա	»
Աւետիս աղա	»
Պ. Գրիգորիս Տէր-Յարութիւնեան Խսկանդարեանց	»

	Օր.
Պ. Գրիգոր Էգեբեանց	»
Պ. Յովհաննէս Տէր-Դաւթեան Նապեանց	»
Պ. Փիլիպպոս Շահրիմանեանց	1
Պ. Տիգրան Զոհրաբեանց	»
Պ. Ստեփաննոս Գեղամեանց	»
Եփրեմ սարկաւազ Սուրիասեանց	»
Սահակ Սարկաւազ	»
Ա. Աղեքսանդր Ատարբեգեանց	»
Պ. Մատթէոս Տէր-Պետրոսեանց	»
Պ. Սողոմոն Տէր-Խաւանկեանց	»
Պ. Մովսէս Տէր-Աբրահամեանց	»
Պ. Յակոբ Խաչատրեանց	»
Պ. Աւետիս Սարգսեան Թառումեանց	»

Ե Ր Ե Ի Ա Ն.

Գերապատիւ Գեորգ Եպիսկոպոս Սուրբեանց	3 *)
Արժ. Վահան քահանայ Տէր-Յովհաննիսեանց	1
Պ. Ղազարոս Ամատունի	»
Պ. Լեւոն Տէր-Յարութիւնեանց	»
Պ. Յարութիւն Յ. Նդեանց	»
Պ. Արամ Մ. Ալեքսանեանց	»
Պ. Մկրտիչ Յովսէփեան Գեորգեանց	»
Պ. Բարսեղ Նդիագարեանց	»
Պ. Քերովբէ Տէր-Գեորգեանց	»
Պ. Ղեւոնդ Բաղտասարեանց	»
Պ. Յովհաննէս Շամխարեանց	»

*) Գեր. Գ. Եպիս Սուրենեանցը 1—1 օրինակ նուիրում է Երևանյ թեմական Դպրանոցին, Երևանյ ս. Գայիանեան օր. Դպրոցին և Լանքօրանու ս. Գայիանեան օր. Դպրոցին:

ՀԻՆ-ՆԱԽԻՋՆԻԱՆ

	Օր.
Օր. Մատիդայ Գասպարբեգեանց	1
Տիկին Կատարինե Ազատեանց	»
Տիկին Նոյսաբէք Իսախանեանց	»
Պ. Կարապետ Աղամեանց	»
Պ. Սարգիս Տեր-Մինասեանց	»
Պ. Խաչատուր Մէլիք-Սարգսեանց	»
Պ. Ստեփանոս Մանուկեանց	»
Պ. Նիկողայոս Պետրոսեան Մամայեանց	»
Պ. Մերովք Տեր-Վարդանեանց	»
Պ. Աւետիս Յովնաննիսեան Պողոսեանց	»
Պ. Ալբերտ Խաչատրեանց	»
Պ. Զաքարիա Յակոբեանց	»
Պ. Յովնաննէս Բունիաթեանց	»
Պ. Մկրտիչ Աբրահամեանց	»

ՍԻՄՖԵՐՈՊՈԼ.

Օր. Նունե Տեր-Օգենտինեան Կոպճակեանց	»
Պ. Վարդան Տեր-Օգենտինեան Կոպճակեանց	»
Տիկին Սրբուհի Գեորգեան Սեֆերեանց	»
Հայոց ծխական հոգեւոր ուսումնարան	»
Սերովքե Գաբրիէլեան Մեսերեանց	»

ՂԱԼԱՐ

Օր. Մարիամ Արեշեան	»
Տիկին Թագուհի Իզմիրեան	»
Օր. Կատարինե Իզմիրեան	»

Օր.

Օր. Հովհաննէ Աղաջանեան	1
Օր. Նոյսաբէք Մուրանեան	»
Օր. Նազինէա Ասլանեան	»

ՍՏԱԻՐՈՊՈԼ.

Արժ. Բարդուղիմէոս ա. ք. Բեկ-Գիւլեանց	3
Սերովքե Սեֆերեանց	1
Գրիգոր դպիր Նզդեանց	1
Արժ. Գեորգ քանանայ Զաքարեանց	2
Պ. Ն. Սողոմոնեանց	1
Նալ Լազարեան	»

Շ Ո Ւ Շ Ի.

Պ. Յովնաննէս Տեր-Գրիգորեանց	»
Պ. Դանիէլ Տեր-Դանիէլեանց	»
Պ. Արսէն Կրասիլնիկեանց	»
Պ. Ննովք Նոնջեանց	»
Շուշուայ դպրանոցի աշակերտական Գրադարան	»
Պ. Առաքել Բաբախանեանց	»

ԱԽԱԼՅԻԱ.

Օր. Գայիանե Տեր-Խաչատրեան	»
Օր. Շողակաթ Պուտուղեան	»
Տիկին Նոյսաբէք Յակոբջանեան	»
Տիկին Սօֆիա Արաբաջեանց	»
Տիկին Դիլուհի Ղանայեան	»

Տիկին Դիտունի Կասպարեան	Յր.	1
Տիկին Աննա Վարդանեան	»	»
Պ. Սարգիս Աւագեանց	»	»
Պ. Կարապետ Մայիստեանց	»	»

ՀԱՇՏԱՐԻՄԱՆ.

Պ. Կարապետ Դաւթեանց	2
Պ. Աստուածատուր Աղամեանց	3
Պ. Մարգար Ն. Նազարբեգեանց	2
Պ. Յովնանէս Աւետեանց	3
Պ. Յովնան Տէր-Յովնանեանց	»
Պ. Շամիր Դուրջեանց	»
Պ. Ղազար Օնանեանց	2
Պ. Յովնանէս Տէր-Աստուածատրեանց	1
Պ. Յովնանէս Տէր-Յակոբեանց	»
Պ. Գրիգոր Իսախանեանց	»
Պ. Իսրայէլ Սիրախեանց	»
Պ. Արգուման Տէր-Յովնաննիսեանց	»
Պ. Մատթոս Յովնաննիսեանց	»
Պ. Խոսրով Պետրոսեանց	»
Պ. Կոստանդ Պարոնեանց	»
Պ. Մարգար Յովնաննիսեանց	»
Պ. Մանասէ Զաւադեանց	»
Պ. Աւետիս Բաբայեանց	»
Պ. Աբրահամ Մէլիք-Աբրահամեանց	»
Պ. Սրապիոն Կոստանդինեանց	»



ՀՀ Ազգային գրադարան



NL0177569

«Կեդրոնական» եւ «Կովկասեան» գրախանութներում վաճառվում են մեր հետեւեայ քարզմանութիւնները.

I. «ՄՏԱԻՈՐ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ», հեղ. ԶՕՆ ՍՏԻՒԱՐՏ ԲԷԼԿԿԻԻ, Էդինբուրգի համալսարանի լուսարէն լեզուի եւ գրականութեան պրոֆէսորի, զինն է . 60 կ.

II. «ՄԱՅՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԲՆՈՒԹԵԱՆ ՕՐԻՆԱՑ ՎՐԱՑ ՀԻՄՆՈՒԾ» (շնորհաց եւ ուսուցչաց համար) Ժ. ԲԱՄԲՕՍՍՈՆԻ, Ֆրանսիական Էնսայկլոպի մեղաւրդի, . 40 կ.

III. «ԿՆՈՋ ԿՈՉՈՒՄԸ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ», հեղ. ԼՈՒԻՉԱ. ԲԻԻԻՆԷՐԻ (շնորհների եւ վարժուհիների համար) . 40 կ.

IV. «ՊԱՊԻ ԶԵՆՈՑՆԵՐ» ՄԻԿԷԼԻՆ ԺԷՄ . 10 կ.

V. «ԱՆԳԱՄԱՂՈՑԾ» ՄԻԿԷԼԻՆ ԺԷՄ ԱՆԴԵՐՍԵՆԻ . 15 կ.

VI. «ՓԱՅԼՈՒՆ ԿՈՊԷԿ» ՄԻԿԷԼԻՆ ԺԷՄ ԲԱՌԵՆԻ . 25 կ.

VII. «ԱՇՆԱՆԱՅԻՆ ԵՐԵԿՈՑ ԳԻՒՂՈՒՄ» Երգախան վոդովիլ մէկ արարումով . 25 կ.

VIII. «ԺԱՆՅՈ ԵՒ ԺԱՆԵՏ», Լաբրա—վոդովիլ մէկ արար. 40 կ.

IX. «ՈՍԿԻ ԲԶԼԶ», ժողովրդական վէպ ԷԴԳԱՐ ՊՈ . 20 կ.

Տառնից աւելի գնողներին զիջումն կը լինի: Ոտարարադարացիք զիմում են ուղղակի Թարգմանչին այս հասցեով՝ *Въ г. Тифлисѣ. Училищу Армянской Духовной Семинаріи Нерсисянъ, Григорію Шахъ-Будалану.*

ՏՊԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԲՈՒՈՐՈՎԻՆ ՊԱՏՐԱՍ Է՝

„ԲՆԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ“

Յոյսեր եւ բաղձանքներ ԱՆԴՐԵԱՍ ԴԱԲՐԷԼԻԻ, Բարիի տէլահիրական ինստիտուտի իտալական գրականութեան պրոֆէսորի.

Գինն է 20 կրպ.